

891.99

Դ-46

ԱՐԵ. ԴԱՐԱԳՅԵՍՏԻԼՅԱՆ (ՀԱՆ-Լ-Ձ)



# ԿՈՄՄՈՒՆԻ ԱՍՏՂԻԿԸ

ԳՐԱՄՊԱ Յ ԳՈՐԾՈՂ. ԳՅՈՒՊԱ-  
ԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Խ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պետական հրատարակություն, — Յերևան 1930

21-12

6 NOV 2011

ՔՈՂԱՔՈԿԱՆ ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ԳԻՒ. Վ.ՕՐՉՈՒԹՅՈՒՆ  
№ 15 ԲԱՆԳՅՈՒԴ ԹԱՏՐՈՆ № 15

891.99

Ռ-46

մար.

ԱՐԵ. ՆԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ (ԴԱՆ-ԼԱԲ)

# ԿՈՄՄԱՆՈԼ ԱԽՏԴԻԿԸ

II ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

880



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ  
Ա ՍՅԱՄՄԻՋՈՒՅՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵԵՐԵՎԱՆ, 1980

## ԳՈՐԾՈՂ ԸՆՉԻՆՔ

### 1. ԱՍՏՂԻԿ

17 տարեկան: Խըճիթվար: Տարիքի համեմատ ավելի փարթամբ՝ գեղեցիկ: Շարժումները, ձևերը կենդանի, արագ, վոճը կտրուկ, դրական: Նախածքը ներշնչում ե համարձակություն, հանդգնություն:

### 2. ՄԱՐԻԱՄ

Աստղիկի մայրը՝ 48 տարեկան, գեղեցկադեմ, վտիտ, ժամանակից շուտ մաշված դեմքով, տիսուր, բայց բարեհոգի արտահայտությամբ, նյարդային շարժումներով:

### 3. ԱՆԱՀԻՏ

Աստղիկի մորաքրոջ աղջիկը և մոտ ընկերուհին: 19 տարեկան, գեղեցիկ, դեմքի համեստ արտահայտությամբ, կյանքի պայմաններին լենթարկվող, հաշտվող:

### 4. ԲԱՐՄԵԴ

Աստղիկի կնքահայրը և տահասարակ նրա ընտանիքի մոտ մարդը: 62 տարեկան, բարեհոգի դեմքով, մեջքը քիչ կռացած և ծխում ե չիրուխ: Խոսելիս՝ հազում ե բրոնխիտից:

### 5. ԿԻՐԱԿՈՒՄ

Անահիտի նշանածը՝ 29 տարեկան: Գյուղական հարուստ և համոզված հականեղափոխական: Նախկին տանուտերի վորդի: Դեմքը ունի շոալլ կյանքի մաշվածության հետքեր: Ընտանեկան կյանքում բռնակալ:

### 6. ԱԼԵՔՍԱՆ

Կիրակոսի մոտ ընկերը՝ 26 տարեկան: Գյուղական կուլակ: Հա-

## ԳՈՐԾՈՂ ԸՆՉԻՆՔ

### 1. ԱՍՏՂԻԿ

17 տարեկան: Խրձիթվար: Տարիքի համեմատ ավելի փարթամ: գեղեցիկ: Շարժումները, ձևերը կենդանի, արագ, վոճը կտրուկ, դրական: Նախածքը ներշնչում և համարձակություն, հանդգնություն:

### 2. ՄԱՐԻԱՄ

Աստղիկի մայրը՝ 48 տարեկան: Գեղեցկաղեմ, վտիտ, ժամանակից շուտ մաշված գեմքով, տիսուր, բայց բարեհոգի արտահայտությամբ, նյարդալին շարժումներով:

### 3. ԱՆԱՀԻՅ

Աստղիկի մորաքըրոջ աղջիկը և մոտ ընկերուէին: 19 տարեկան, գեղեցիկ, գեմքի համեստ արտահայտությամբ, կյանքի պայմաններին լենթարկվող, հաշտվող:

### 4. ԲԱՐՄԵԴ

Աստղիկի կնքահայրը և առհասարակ նրա ընտանիքի մոտ մարդը: 62 տարեկան, բարեհոգի գեմքով, մեջքը քիչ կոացած և ծխում և չիբուխ, Խոսելիս՝ հազում և բրոնխիտից:

### 5. ԿԻՐԱԿՈՒ

Անահիտի նշանածը՝ 29 տարեկան: Գյուղական հարուստ և համոզված հականեղափոխական: Նախկին տանօտերի վորդի: Դեմքը ունի շուայլ կյանքի մաշվածության հետքեր: Ընտանիկան կյանքում բրնակալ:

### 6. ԱԼԵՔՍԱՆ

Կիրակոսի մոտ ընկերը՝ 26 տարեկան: Գյուղական կուլակ: հա-

կախորհոգային տիպ: Գեղեցիկ ե, առողջ, թիկնավետ, զլուխը  
միշտ բարձր ե պահում, դեմքի գոռող արտահայտությամբ:

#### 7. ՓԻԼԻՊՈՍ

Գյուղական վաշխառու՝ 60 տարեկան: Կարճահասակ, թիկնավետ,  
զգալի դուրս ցցված փորով. կարճ, խիտ մորուքով, հաստ հոն-  
քերով և բեղերով: Դեմքը միշտ մտազրադ ե, աչքերը ցած դցած,  
խոսում ե ալկոհոլից խանձված ձայնով:

#### 8. ՄԱՐԹԱ

Կիրակոսի մարը՝ 62 տարեկան. տծե, չտղ, շարժուն աչքերով,  
դեմքի չար արտահայտությամբ, հակառակ իր տարիքի՝ շար-  
ժումները, ձեերը աշխուժ են, արագ:

#### 9. ԱՐԱՄԱՅԻՒՄ

Անահիտի հորեղբարը: Գյուղխորհոգի նախագահ. կուսակցական,  
հախկին բանվոր: Ժամանակակից վարչական աշխատավորի  
գործնական տիպ. 28 տարեկան:

#### 10. ՄԻՍԱԿ

Կոմսոմոլ: Գյուղփոկի նախագահ: Ուրախ դեմքով, կատակասեր:  
21 տարեկան:

**Աստիկը** հագած ե չթից հասարակ դերա, բայց ճաշակով  
կարված: Գլուխը բաց ե, մտզերը խնամքով սանրած, վուներին  
չուստ, նուրբ գուլպաներով:

**Կիրակոս,** **Արամայիս** յեկ Վիսակ հագած են կիսաքաղա-  
քացու շորեր: Գլխարկով են. վոտքերին ճափերով կոշիկներ:

**Բարսեղ,** **Փիլիպոս** գյուղացու հատուկ շորերով են, մորթե  
մեծ գլխարկներով: Փիլիպոսը կրում ե նաև արծաթյա լայն գոտի:

**Ալեքսան** հագած ե գյուղական շորեր, սակայն խնամքով և  
մաքուր:

**Մարիամ,** **Մարիա** գյուղական հատուկ տարազով են, գլուխ-  
ները կապած, վորոնցից Մարթան կրում ե նաև ճակատին վու-  
կիներ:

**Անահիտ** առաջին գործողության մեջ հագնված ե շատ լավ,  
բայց անձաշակ, իսկ յերկրորդ գործողությունում վատ և հագնը-  
ված, դեմքով մաշված:

### ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում ե գյուղական ողա՛ աղքատիկ, բայց  
խնամքով կահավորված: Կան գյուղական անհրաժեշտ կանոնա-  
բաներ: Պատերին միքանի տեղ փակցրած են պլակատներ  
յեկ միքանի ականավոր կոմունիստների նկարներ, ինչպես, որի-  
նակ՝ լենին յեկ ուրիշներ: Մուտքը դիմացի կողմից ե. միփեղկ-  
յա մեծ դուռ, վորը բացվում ե փոքրիկ հաշտի մեջ: Հաշտից աջ  
դրախ դուռն ե, իսկ ծախը տանում ե թոնրատուն: Ազ պատի  
տակ կա մի մեծ սեղան՝ լրազրով ծածկված, վրան դարսած են  
զրբեր, «Մաճկալ» թերթ յեկ ուրիշ լրազրեր: Զախ կողմում մի  
մեծ տախտ, վորը մահճակալի ծեվ ունի: Կան փայտյա հասա-  
րակ միքանի աթոռներ (տաքուրետ):

### ՏԵՍԻԼ 1

ՄԱՐԻԱՄ, ՓԻԼԻՊՈՍ (միջին դոնից ներս ե մենամ Մարիամը,  
նրա յետելից Փիլիպոսը)

ՄԱՐ.—Եղ ա կովս, Փիլիպոս յեղբայր, հիմի դու քո խղճատանքը,  
ինչ կուտաս՝ տուր:

ՓԻԼ.—Թե վոր բանը խղճատանքի յես թողնում, դու լավ գիտես,  
վոր սաղ գեղամիջին ինձանից խղճով մարդ չկա: Քու ո-  
ղորմած-հոգի Սարոցի հետ հաց ենք կերել, ախպերություն  
արել, դու յել եսոր իմ քվոր տեղն ես. ինչ վոր ուրիշները  
կովկե տվին, յես միքանի մանեթ ել ավել տամ:

ՄԱՐ.—Աստված ել քո դովլաթն ավելացնի, շատ նեղն եմ, Փի-  
լիպոս յեղբայր, իմ ունեցած-չունեցածն ել եղ մի կովս ա:  
նստիր, Փիլիպոս յեղբայր, ինչի՞ կանգնար (նստում են). ե-  
սոր ել մեր Անահիտի հարսանիքն ա:

Փիլ.—Վարդանի աղջկա, հա, գիտեմ, լավ աղջիկ ա. շատ լերեն-  
լի տեղ ել հարս ա զնում:

ՄԱՐ.—Դու յել մեր մարդն ես, քեզանից ի՞նչ պահեմ. ծաղի փոր  
չունեմ: Խնամիներս տունս գտն, մի թաս արադ ել ա չկա՝  
պատվեմ: Յես ել ոջտիսի կնիկ եմ, կասեմ՝ խայտառակ չը-  
լիմ գեղականի առաջ, լավս են ա՝ կովս ծախեմ.

Փիլ.—Ինչ կըլի, շատ ել լով կանես, կովի եղածը ի՞նչ ա. մար-  
դու պատիվը ամեն բանից աղիզ ա:

ՄԱՐ.—Դե, հիմի գնի մասին ի՞նչ կասես:

Փիլ.—(Մասձկոս) Ինչ ասեմ... հիմի տավարը ելել ա ջրի գին:  
Քո տեղակ մեկ ուրիշը անփող ել տար՝ չելի առնի: Չունքի  
դարը չկա: Խոտի փութը ելել ա, Ե՛ն, մի մանեթ: Են որը  
մի մալական մի լավ կով եր բերել ծախում եր, յերեսուն  
մանեթ եր ուզում, ամա ըսկի մարդ ելա մոտ չգնաց:

## ՏԵՍԻԼ / 2

Ներս և մենում ՄիԱՅԱԲ

ՄԱՐ.—Քա ի՞նչ, յերեսուն մանեթ կովը...

Փիլ.—Հա, քու արել:

ՄԻՍ.—(Մարիամին) Ասաղիկը տանը չի:

ՄԱՐ.—Խոճիթ գնաց, Միսակ ջան:

ՄԻՍ.—Յես խոճիթից եմ գալիս՝ ենտեղ չել:

ՄԱՐ.—Ել չեմ իմանում, աղիզ ջան, (Փիլիպոսին) Եղ խոմ մենակ  
կովիս կաշին կարժենա յերեսուն մանեթ:

Փիլ.—(Միսակի ներկայությունից անհանգստանալով) Դե ել չեմ  
իմանում:

ՄԻՍ.—(Մարիամին) Եղ ի՞նչ, կովդ ես ծախում:

ՄԱՐ.—Հա, Միսակ ջան:

ՄԻՍ.—(Ծաղրական) Լավ ել մուշտարի յես գտել, յես իմ հոգին:

ՄԱՐ.—Դրուստ ա, ամա ենպես մի զին ա ասում:

ՄԻՍ.—Ի՞նչ ա տալիս:

ՄԱՐ.—Կասա՝ յերեսուն մանեթ:

ՄԻՍ.—Շատ լավ զին ա, ել ի՞նչ ես ուզում:

Փիլ.—(Լուրջ ընդունելով Միսակի խոսերը) Ընդ, ես ել Միսակը՝  
տեսմոր:

ՄԱՐ.—Քա եղ ի՞նչ ա կասեք... բա ենոր քավոր Բարսեղը կա-  
սեր՝ հիմի լավ կովը հարցուր մանեթ արժի:

ՄԻՍ.—Ինչի՞ հարցուր հիմուն ել չարժի: Մենակ թե քեզպեսների  
կովի համար չի ասած:

Փիլ.—(Գլուխ ընկած) Յանի ի՞նչ կուզես ասել:

ՄԻՍ.—Ըսկի, զուք ձեր բազարը արեք:

Փիլ.—Կասենաս՝ յես յեկի եմ կովը զոռով առնեմ:

ՄԱՐ.—Դրուստ ա, Միսակ, յես եմ կանչել: Փիլիպոս յեղբայրն  
ել մեր մարդն ա, խղճով մարդ ա, թող մի բան ել ավե-  
լացնա՝ բազարը գլուխ գա:

Փիլ.—Բաշուստա, ինչի չե, ավելացնեմ: (Ձեռքը տանելով ծոցի  
գրանիքը) Ընդ, քառասուն մանեթ, առ, ասա՝ խերը տեսաս:

ՄԻՍ.—(Ծաղրական) Ե, ի՞նչ ես անում, Փիլիպոս թիմա, քառա-  
սուն մանեթով զու եղպես երկու կու կառնես, բա քեզ  
պես հասկացող մարդն ել մի կնկա խարվի:

Փիլ.—(Կողմբ) Հալլա, հալլա, ես շան տղեն ել մեր բազարին  
պիտի վրա գար: (Միսակին) Դու յել ի՞նչ ես մարդի մաս-  
իարա գցում: Թուրքը ասում ա՝ Փուլ ըենիմ, մալ սենին.  
փողը իմն ա, ապրանքը՝ քոնը, խելքը չի կարում՝ թող չտա:

ՄԻՍ.—Եղ շատ խելոք ա ասել թուրքը: Հիմի թող քո փողը  
քեզ մնա, նրա կոմի ել՝ իրան:

Փիլ.—Բաշուստա, յես չելի իմացել, վոր խալիսի ապրանքի իրա-  
վունքը քո ձեռին ա:

ՄԻՍ.—Խալիսի ապրանքի իրավունքը իմ ձեռքին չի, համա ես-  
պես քամսիբների ունեցածին քո զիլու իշտահը կապելը  
համ, եղ իմ բանն ա:

Փիլ.—(Կողմ) Ես լակոտներն ել մեր զիլին խտակ խոթա յեն:

ՄԻՍ.—(Մարիամին) Դու ինձ մի են ասա, ինչի՞ յես կովդ ծախում:

ՄԱՐ.—Միսակ ջան, ի՞նչ անեմ, վրես սթար չկա, հացի նեղու-

թուսն ունեմ:

ՄԻՍ.—Լավ, վոր հացի նեղութիւնն ունես, բա մեր զեղի Փոկը  
ի՞նչի՞ համար ա:

ՄԱՐ.—Յա, եղ ի՞նչ բան ա, Միսակ:

ՄԻՍ.—Ինչի՞, Փոկն ել չես իմանում:

Փիլ.—(Մեկուսի) Ալ, յես եղ Փոկ իջաթ հանողին...

ՄԱՐ.—Քա, ի՞նչ իմանամ:

ՄԻՍ.—(Ծաղրական) Փոկն են ա, վոր քեզ պես քամսիբները նե-  
ղության մեջ ըլելիս Փիլիպոս թիմայի պես աղիմ մարդկե-

բանց գլխացավանք չտան։ Տեսմը, քու հարյուր-հարյուր հիսուն մանեթանոց կովիդ քառասուն մանեթ փող եր տալիս, են ել քո ազիդ խաթրու համար։ Փիլիպոս բիձան վոր կա, ոհ, ուրիշ մարդ ա։ Քանի՞ քեզ պես միամիտների յալովպել։ (Անմիջապես ծածկելով բերանը, Փիլիպոսին) Կայ, ներողություն, Փիլիպոս բիձա, ուզում ելի ասել՝ լավություն արել։ Անտեր լեզուս քացի տվեց։

ՄԱՅ.՝ (Տարւակուսած) Քա ես աղեն ել ի՞նչ կասա։

ՄԻՍ.՝ (Մարիամին) Քու արել, Մարիամ մայրիկ, Փիլիպոս բիձան քեզ նեղությունից ուզում եր ազատել. չես հավատա, այ ասեմ. կովը պահելը՝ եղ մեկ նեղություն, կթելը՝ ես երկու նեղություն, իեղ, պանիր շինելը՝ ես իրեք նեղություն։ Իսկ ամենամեծ նեղությունը, եղ ուտելու նեղությունն ե։ Հիմք Փիլիպոս բիձան կասե—ախպեր գուք զրադ կանգնեք, եղ բոլոր նեղությունը յես քաշեմ։ Խեղճ Փիլիպոս բիձա, յարաք ձեզ պես քրասիբների խաթրու ուտելու ինչքան նեղություն քաշած կլինի։ (Յույց տալով Փիլիպոսի փորը) այ ես թափանն ել վկա յե։

ՓԻԼ.՝ (Զայրացած) Դե, բոլ ա ե, աննամուսներ, թու, փչացավ աշխարհը, ելի. ել վոչ մարդկություն կա, վոչ քաղաքավարություն, վոչ մեծի պատիվ պահել…

ՄԻՍ.՝ Դրուստ ա, դրուստ, Փիլիպոս բիձա, ձեր աշխարհը փչացել ա, ել վոչ գոփել եք կարում, վոչ գջել, վոչ խարել. շաբաշ, բուրդ ա ձեր բանը (ազ ձեռքով բերեվակի խփելով Փիլիպոսի փորին, ձախով ձեռք բերելով վզին): Ախ, թափան, թափան, ես քու ախրը թնչ ա ըլելու։

ՓԻԼ.՝ (Խիս զայրացած) Թու, յես ձեր մարդ ասողին… (դուրս):

ՄԻՍ.՝ (Փիլիպոսի յետինից) Հը, բազարդ գլուխ չեկամվ…

ՄԱՅ.՝ Միսակ, ինչի՞ բիշառու ամբու եղ գոր նեղ մնացինք, դրանց դուռը գնանք, ե, յես չեմ հասկանում,

քեզ ասացի՞ մի բանի նեղություն ունես, են ա՝ Փոկից վերցրու. նախագահն ել յես եմ։ Հը, ինչքան տամ։

ՄԱՅ.՝ Աստված քու բանը հաջողա, Միսակ ջան, մի տասը մանեթ տաս՝ բոլ ա։ Եսոր Անահիտի հարսանիքին ծաղի կտամ։

ՄԻՍ.՝ Զե, եղ մեկը ներողություն կանես, Փոկը ծաղի համար փող չի տա։ (Դրսից յովամ ե նիպոտի հարվածների ձայն՝ չո՛, ոհո՛, յեվ ալն):

ՄԱՅ.՝ Վայ, կովս ելի արձակվել ա, գնացել Մելիքանց դեզի վրա։ (Նտապ դուրս ե գնում):

## ՏԵՍԻԼ 3

ԱՍՏՎԻԿ, ՄԻՍՈՎԿ

ԱԱՏ.՝ Միսակ, յես քեզ եմ ման գալիս։

ՄԻՍ.՝ Յես ել քեզ։ Անցյալ որվա ժողովի արձանագրությունը պատրաստել ես։

ԱԱՏ.՝ Հա, վերցրու (Տալիս ե). հենց ընկեր Մարգարանի հետ ել կուղարկես։

ՄԻՍ.՝ Ընկեր Մարգարանը արգեն գնաց։

ԱԱՏ.՝ Ափսոս։

ՄԻՍ.՝ Նրան կենարոնից շտապ կանչել ելին։

ԱԱՏ.՝ Միս, Միսակ, յերանի նրանց, վոր ընկ. Մարգարանի պես ուսումնական մարդկանց ամեն որ կլսեն. միքանի որ ել մնար՝ ի՞նչքան բան կսովորեցինք նրանից։ Ի՞նչքան ել իրան հասարակ եր պահում. տեսաք, գեղականի հետ ի՞նչպես յայլի բռնեց։

ՄԻՍ.՝ Ասում են՝ նա առաջ բանվոր ե յեղել իսկ հետո, խորհրդացին իշխանության որոք, գնացել ե Մոռկվա սովորելու։

ԱԱՏ.՝ (Հառաչիլով) Յարաք, Միսակ, մենք ել եղակես մի բախտի կարժանանամնք։

ՄԻՍ.՝ Բայց գիտես, Աստվիկ, ընկ. Մարգարանը քեզ շատ ե հավանել, զո մասին հարցումիոր եր անում։

ԱԱՏ.՝ Բայց մեր աշխատանքներից նա այնքան ել գոհ չֆնաց։ Տեսմը, յերբ խրճիթի պահարանից մեկ-մեկ դուրս բերեց չկարտված գրքերը, —մկները ձեզանից շատ են կարգացել— ասաց։

ՄԻՍ.՝ Դրուստ, եղ մեծ ամոթանք եր մեզ համար։

## ՏԵՍԻԼ 4

ԱՆԱՀԵՏ, ԱՍՏՎԻԿ

ԱՆ.՝ (Մտնելով) Բարե ձեզ,

ՄԻՍ.՝ Դե, յես գնացի…

ԱՆ.՝ Ինչու փախավ։

ԱՍՏ.—Գործ ուներ: Եսոր հարսանիքու ե, իսկ դու տանից գուրս  
ես գնացել:

ԱՆ.—Ե, բան ել՝ յեղափ: Հարսանքավորները դեռ շուտ չեն հա-  
վաքվի, Քավոր Բարսեղը յեկել ե ձեզ մոտ:

ԱՍՏ.—Չե, ի՞նչ կա վոր:

ԱՆ.—Պոչինչ, ենակես հարցրի: Ես ի՞նչ ե քու արածը, լայեղ չես  
անում իմ հարսանիքին գամ:

ԱՍՏ.—Լավ, թողնենք եղ: Դու ինձ են ասա, ինչո՞ւ են որը չմնա-  
ցիր Սարգսյանի դասախոսությանը, Եղափիսի դասախոսու-  
թյուն մեր գուռում տարին մեկ անգամ ել չի պատահի:

ԱՆ.—(Անփոյք) Լավ, իմացել եմ եղ դասախոսության մասին.  
(Կիսահանդիմանական) Են ել եմ իմացել, վոր դասախոսու-  
թյունից հետո դու մենակ գնացել ես ընկեր Սարգսյանի  
մոտ:

ԱՍՏ.—Հա, գնացել եմ, ի՞նչ կա վոր:

ԱՆ.—Են, վոր եսոր սադ գեղը դրա մասին ե խոսում, վոր դու  
անգայել բան ես արել:

ԱՍՏ.—Չեմ իմանում, իմ գնալն ե անգայել բան, թե ձեր խո-  
ստը:

ԱՆ.—Լավ, գնացիր, միքանի գեղական տղերանց և աղջիկների  
հետ կերթալիր:

ԱՍՏ.—Ինչի՞ գաղանի մնտ ելի գնում, ինչ ե:

ԱՆ.—Ալս, Աստղիկ, ախար չե՞ վոր գեղականը քո վարմունքը չի  
կարող հասկանալ:

ԱՍՏ.—Շատ հարկավոր ե, Եղափիսիները թող ինձ չհասկանան,  
չես դրա մասին ըսկի յել չեմ մտածում:

ԱՆ.—Ե, լավ, թողնենք եղ խոսակցությունը. ախար յես քեզ  
մոտ յեկել եմ մի ուրիշ գործով:

ԱՍՏ.—Գլխիս խրատներ կարդալու:

ԱՆ.—Եղ իրա կարգին: Դու ինձ են ասա՝ ինչո՞ւ չես ուզում գալ  
իմ հարսանիքին:

ԱՍՏ.—Մարդիկ հարսանիք են գնում ուրախանալու:

ԱՆ.—Ուրեմն դու ուրախ չես:

ԱՍՏ.—Թե վոր զըսւար ասեմ՝ ուրախ չեմ: Անո ջան, բա մոր  
մնացին քո խոստումները, մեր ծրագրերը, վոր գնալու ե-  
լինք Յերեան սովորելու. մի՞տղ ա՝ ինչ բաներ ելիր ասում:

ԱՆ.—Ե, ինչ կա, ելի կգնանք, Կիրակոսը ասում ե՝ քեզ կուղար-  
կեմ Յերեան՝ ուսումդ շարունակես:

ԱՍՏ.—Դրանք դատարկ խոսքեր են. գլուզական աղջկա համար-  
մարդու գնալուց հետո գնալ ուսում շարունակելը այնքան-  
ել հեշտ բան չի:

ԱՆ.—Ախար, Աստղիկ ջան, ըսենց մենակ մնալն ել մի բան չի.  
մարդիս սիրտը ուզում ա մեկը ունենա, սիրի, սիրվի. բա-  
աղջի, քո սիրտը ըտենց բաներ չի ուզմաւմ: Մի ասա, Աստ-  
ղիկ ջան, դու մում ես ուզում:

ԱՍՏ.—Էսկի մեկին ել:

ԱՆ.—Մուտ ես ասում, բա քեզ մեր չի բերել:

ԱՍՏ.—(Ճնշվում ե, կարմրում):

ԱՆ.—Եյ, տեսնո՞ւմ ես, գիտեմ՝ քո սիրտն ել մեկին փնտուում ե:  
(Քնիքաբար) Աստղիկ ջան, մենք մոտ ընկերուհիներ ենք,  
միասին խաղացել ենք, միասին մեծացել, արի կըլի՝ միա-  
սին ել պսակվենք:

ԱՍՏ.—Եղ ելիր ասելո՞ւ:

ԱՆ.—Հա, Աստղիկ ջան, արի դու յել Ալեքսանին առ ու պրծիր-  
կիրակոսը, Ալեքսանը մոտ ընկերներ, մենք ել մոտ ընկե-  
րուհիներ. ուսւ ինչ լավ բան ե ըլելու:

ԱՍՏ.—Իսկ և իսկ պառավական խոսքեր. պսակվեմ, ինչ ե՝ դու  
յես պսակվում. Ալեքսանին առնեմ, ինչ ե՝ դու յել նրա-  
մոտ ընկերոջն ես առնում:

ԱՆ.—Բա, Աստղիկ ջան, եսպես մնալով ել քու վերջը ի՞նչ ա ը-  
լելու: Խաթրդ չմնա, շատերը քո խելքի վրա ծիծաղում են:

ԱՍՏ.—Ի՞նչ անենք, մի ժամանակ Լենինի պես մարդու մտքերի  
վրա յել են ծիծաղել. բայց նա հաստատ մնաց իր գաղա-  
փաներին և հաղթությունը տարավ:

ԱՆ.—(Քիչ հեղինական) Դու յել ուզում ես Լենին դառնամ:

ԱՍՏ.—Յես կգնամ Լենինի ճանապարհով:

ԱՆ.—Լենինը ասել ա՝ չամուսնանամ:

ԱՍՏ.—Մեզ հարկավոր ա սովորել, մի նպատակի հասնել,  
իսկ ամուսնանալ՝ միշտ ել կարելի յե:

ԱՆ.—Ե, ի՞նչ ասեմ, գիտեմ, վերջը շատ ես փոշմանելու, բայց  
ուշ կըլի:

ԱՍՏ.—Եղ հետո կերևա՝ յես կփոշմանեմ, թե դու, վոր դավաճա-  
նեցիր քո գաղափարներին, քո կուսակցությանը և մինչեւ  
իսկ համաձայնվել ես կուլակի կին դառնալ:

ԱՆ.—(Վրդովկած) Դե լավ, դու յել ինչ ամեն հասնողին՝ կու-  
լակ, կուլակ, չգիտեմ ինչ. կուլակներ հիմի չկան:

ԱՍՏ.—Հա, մի որում եղափես փոխվեցիր, արդեն նրանց կողմն ես:

ԱՆ.—(Մարիամին) Բարե, մոքիր, ևս ի՞նչ մեր ու աղջիկ ծանր  
եք ժամանակավորներն ել ես ահավագում են:

ՄԱՐ.—Ուրախությունով պսակ ըլի, աղիզ ջան, բախտավոր  
ըլես, համա մեր կողմից՝ ներող լեզեք. մի քիչ քեփս իւս-  
րաբ ա:

ԱՆ.—Բա յես պսակվեմ, իմ հալալ մոքիրը, նրա աղջիկը իմ  
հարսանիքին չըլեն:

ՄԱՐ.—Ի՞նչ ասեմ, աղիզ ջան, վրես սթար չկա. մեկ ել .. (ու-  
զում ե մի բան ասել, նեռվում ե):

ԱՆ.—(Գլխի բնկած) Ամոթ ա դրա մասին մտածելը. իմ հարսա-  
նիքը ծաղով չի ըլելու: Դե՛ վռադ եմ, յես գնացի, դուք  
ել հաղիրվեք ու լեզեք. թե չ' հարսանիքը ձեր դռնովն ա  
անցկենալու, ձեզ ել կդցենք զոտվողի մեջ ու կտանենք:  
(Աստղիկին) Աստղիկ ջան, եղ հիմի ի՞նչ վոր քո զլխում  
կա, (փշելով ափի մեջ) փուֆ, բոլորը դատարկ բաներ են,  
հուսով եմ՝ խելքի կգաս (դուրս):

ԱՄՏ.—Յերբ խելքս կորցնեմ... (նսում ե, սկսում ե կարդալ:  
Մարիամը վերցնում է նաղերը, սկսում ե գուլպա գործել:  
Յերկար պատզա):

ՄԱՐ.—(Խեր-խեր նայելով Աստղիկին) Աղջի, ելի ի՞նչ ա, հագ հա-  
գար կարդում ես, բոլ չելավ. եղ ա ուսումնարանն ել ա-  
գարտեցիր, պրծար, ել ի՞նչ ես անում գիրքը, քիչ ել տան  
գործի մտիկ արա:

ԱՄՏ.—(Թողնում ե զիրքը) Դրուստ, յես եսոր վոչինչ չեմ արել:  
Համա մի նեղանա, մայրիկ, եգուց ել յես կաշխատեմ, դու  
կհանգստանաս:

ՄԱՐ.—(Անբավական) Ե՛, նեղանամ-չնեղանամ, դու վոր ինձ  
համար աղջիկ չես:

ԱՄՏ.—Թող, մայրիկ, եղանա մի խոսի:

ՄԱՐ.—Բա ի՞նչ թհար խոսամ: Տաս ոխթ տարեկան աղջիկ ես,  
հլա խելքդ ուսումի, ժողովքի, յես ի՞նչ գիտամ՝ կուսակցու-  
թյուն, եղ ել ելավ հասած աղջկա շնորհք: (Պատզա) Ես  
յաշիս կնիկ եմ, ամա չունքի եսոր չելի իմացել, վոր տառ  
ոխթ տարեկան աղջիկը հլա կարգա:

ԱՄՏ.—Ե, մայրիկ, հլա շատ բաներ կիմանաս, շատ:

ՄԱՐ.—Դրուստ ա, հլա շատ բաներ պտի իմանամ: Զմեռանք,  
են ել իմացանք, վոր գեղի նախագեն միթամ կնիկ ա:

ԱՄՏ.—Յեզ շատ ել լավ ա, տղամարդկանցից ել լավ ա կառա-  
վարում: Այ, մայրիկ, թե վոր ուզենալիր, դու մեր գեղի  
նախագահը կլինելիր:

ՄԱՐ.—Դե, թող, աղջի, եղ եր պակաս:

ԱՄՏ.—(Ուրախ կատակելով) Մայրիկ, թե դու ելիր լեզել մեր գե-  
ղի նախագահը, ասեմ ինչ հրամաններ կտալիր: Հլա հողը  
բոլորը կրաժանելիր հարուստներին: Կարգելիր ամեն տե-  
սակի ժողովները, նամանավանդ՝ կանանց, կոմսոմոլների:  
Կը բամատելիր աղքատ գյուղացիներին որեկան լերեք ան-  
գամ ժամ գնալ, Զորության դեմ կովելու համար կառաջար-  
կելիր մատաղներ մորթել: իսկ ուսումնարաններում կկար-  
գագրելիր որեկան հինգ ժամ կրոն պարապել (ծիծաղում ե):

ՄԱՐ.—(Զայրացած) Դե, աղջի, բոլ ա ծիծաղաս մորդ վրա:

ԱՄՏ.—Դրուստ չեմ ասմամ, մայրիկ:

ՄԱՐ.—(Նույն զայրույթով) Դե, աղջի, բոլ ա, լմա, քա մի նստի:  
(Քաշում ե բեվից, նստցնում կողին) ամոթ ա, հասած  
աղջկան եղքան ծիծաղալը լավ չի:

ԱՄՏ.—(Կեղծ լրջուրյամբ) Լավ, չեմ ծիծաղա (պառզա): Հիմի  
ի՞նչ անենք... նստենք եսպես, չե՛ Լավ, նստենք: (Գերքերը  
կրծին ծալած, կոմիկ պոզայով նսում ե մոր կողին, աշխա-  
սելով նմանվել զյուդական պառավերին):

ՄԱՐ.—(Նայում ե Աստղիկին տարակուսած, վօսացած, ծանր նա-  
ռաջում) Ախ...

ԱՄՏ.—(Ծամածուելով) Ախ...

ՄԱՐ.—(Խիս զայրացած վեր ե բռչում տեղից) Այ, դու բերթուն  
աղջիկ, յես քո մասինարեն եմ համ... (Սկսում ե ման զալ)  
Քա են ճիպոտն ել ի՞նչ լեզավ:

ԱՄՏ.—Ճիպոտն ես ման զալիս, մայրիկ, դե, ենա կասելիր, յես  
կտալի (նմանապես ման ե զալիս, ի վերջ Աստղիկը գտնում  
ե նիպոտը) Ախ, մայրիկ:

ՄԱՐ.—(Ուզում ե հարվածել, բայց տեսնելով Աստղիկի կոմիկ պո-  
զան՝ նիպոտը ցած ե գցում):

ԱՄՏ.—Ֆիզկուլտով ես ուզում պարապել, մայրիկ, եղ չելավ,  
թող քեզ սովորցնեմ (բռնում ե մոր ճեռինից յեվ շարժում  
նետ, առաջ, վեր, վար) մեկ, յերկու, յերեք, չորս (մի հանի

անգամ, մինչեվ Մարիամը զայրույթից աւ բնդիմաղրությունից  
բնկնում ե ցած) մեկ, յերկու, յերեք, չորս (ասելով մօրը բն-  
րում, նստացնում ե տախտին):

ՄԱՐ.—Չե, աղջիկո գժվել ա, գժվել...

ԱՍՏ.—Տեսան, մայրիկ, փիզկուլտով ինչպես կպարապեն, իսկ դու  
վերցրել ելիր ճիպուը և քիչ մնաց ինձ խփելիր:

ՄԱՐ.—Բա վոր աշքը ել հանելի տեղը չե՞ր:

ԱՍՏ.—Ոչ, ոչ, ոչ ի՞նչ ես ասում, մայրիկ, դու չե՞ս իմանում,  
վոր խորհրդացին իրավակարգում խփելու իրավունք չկա:

ՄԱՐ.—(Լացակումած ձայնավ) Բա եղ կարգերում, եղ որենքնե-  
րում մի խեղճ, անտեր կնկա հոգին հանելու, սիրու դաղե-  
լու իրավունք կա...

ԱՍՏ.—Դե լավ, մայրիկ, ներիր, ուզում եիի քեզ հետ քիչ հանաք  
անեմ (ջերմագին գրկում ե մոր իրանը, զլուխը դնում կրծքին):  
Ախ, մայրիկ ջան, թի իմանաս քեզ ինչքան շատ եմ սիրում:  
ՄԱՐ.—(Մրելով արտասույք, Աստղիկին հեռացնելով իրանից) Դե,  
թող, դու ինձ ըսկի յել չես սիրում. յես ի՞նչ մեր եմ քեզ  
համար. զնա քո կոմսուների կշտին, նրանք քեզ ավելի  
յեն հավան: Են որվանից, վոր գըի սեն ու սիպտակը ջո-  
կեցիր, հիմի յես քո կշտին մի տավար եմ:

ԱՍՏ.—Սխալվում ես, մայրիկ ջան: Ե, ի՞նչ ասեմ, մի որ կհան-  
կանաս, թե յես քեզ ինչքան եմ սիրել:

ՄԱՐ.—Մորդ վոր սիրելիր, նրան եսքան նեղություն ու տան-  
ջանք չելիր տա, նրա մուրազը փորումը չելիր թողնի (վեր-  
ցնում ե գուլպան, սկսում ե գործել): Մի են թելի կծիկը  
ինձ տուր:

ԱՍՏ.—(Կատարում ե յեվ դարձալ տեղակորվում մոր կողքին),

ՄԱՐ.—Ես հատերն ել թափան:

ԱՍՏ.—Տուր, մայրիկ, յես անցկացնեմ ճաղին: (Վեցնում ե: Յեր-  
կար պառլամ):

ՄԱՐ.—(Ծանր մատանջությունների մեջ ընկած) Ե, Աստղիկ, Աստ-  
ղիկ, ես տասը տարի յա հերդ չկա, քամբախտ նիկոլի կըս-  
վում կորավ: Ախպորդ դաշնակները տարան, սպանին, մենք  
ել մնացինք անտեր, ես տասը տարի յա, տասը հաղար տե-  
սակ զոռով ու տանջանքով մի կտոր չոր հաց ենք ձեռք  
բերում յես ու դու: Ել իլլաջ չի մնացել, բալա ջան, մարդ  
չունենք, պաշտպան չունենք, մինչի լիրը եսպես մղկտանք:

ԱՍՏ.—Ե, լավ, ի՞նչ անենք, մայրիկ:

ՄԱՐ.—(Համոզեցուցիչ տոնով) Ի՞նչ պտի անհնք. են ա՛ բախտը  
եկել ա, մեր զանն ա կագնել:

ԱՍՏ.—Հատերը անցըրի ճաղին, վերցրու, մայրիկ:

ՄԱՐ.—(Վեցնում ե. պառլամ) Եսոր Զանոյենց Սաթոն եկել եր.  
կասա՝ Ալեքսանը շատ ա ուզում Աստղիկին, կասա՝ չտաք,  
զոռով կփախցնեն, իմացմը:

ԱՍՏ.—(Ոնքույթ) Իմացա, մայրիկ, ես գուլպայի թաթը յես կա-  
սեմ նեղ ես բռնել:

ՄԱՐ.—Նեղ չի: (Պառլամ) Աստղիկ ջան, աղիկ բալա, քեղանից  
սավալի ուրիշ միիթարություն չունեմ: Ալեքսանը փիս  
տղա չի. տները շեն, գովլաթները բոլ, յև ըտենց մի փեսա  
ունենամ, քո բախտավորությունը տեսնեմ: Քու ես ժողով-  
ներից ի՞նչ ա դուրս գալու... Սալ գեղամիջին խայտառակ  
ես եկ, առավոտ ով վեր ա կենում՝ քո վրա յա խոսում, թե՝  
կոմսուների հետ ժողովքի կերթա, թիատր կխաղա, կծի-  
ծաղա, տղերանք ձեռ են տալիս, վոր չեմ իմանա՝ լավ ա  
գետինը ճեղքվի ինձ մեջը անի: Ամոթու սուս եմ կենում:  
Ախ, բալա ջան, ի՞նչ ասեմ, մեր պտի ըլես, վոր իմանաս ի՞նչ  
բան ա աղջկա նամոււսը:

ԱՍՏ.—Ի՞նչ ասեմ, մայրիկ ջան, վոր յիլ կոմսունոլ պտի ըլես, վոր  
իմանաս՝ ի՞նչ բան ե ուսում, լուսավորություն, առաջդի-  
մություն:

ՄԱՐ.—(Գայրացած) Աղջի, բոլ ա եղ կուսակցականների ծռտի-  
պտի խոսքեր անես: Լավ ա տար ինձ գերեզմանը գիր,  
ընդունց գենը ի՞նչ կուզես՝ արա, ելի լավ ա Ալեքսանը  
աչք ա գցել քեզ վրա. Թե չե՝ քեզ ով կառնի, Սալ գեղա-  
կանը ասում ա.՝ Աստղիկը լկրտված, դուրս ընկած աղջիկ  
ա, հարս չի կարա ըլի:

ԱՍՏ.—Մայրիկ, թե դու յիլ կուզես ինձ սաղսաղ գերեզմանը  
գնես, տուր ինձ Ալեքսանին:

ՄԱՐ.—(Գայրացած) Բա, ընչի, աղջի, ընչի...

ԱՍՏ.—Ել, ասեմ: Առաջինը, վոր Ալեքսանը ենքան ել լավ տղա-  
ներից չի, գեղի անկիրթ, կոպիտ զոռբաներից ե:

ՄԱՐ.—Բա աղջի, եղքան զովլաթ ունեցող աղեն փիս կըլի...  
Բա ժւմ ես ուզում:

ԱՍՏ.—Բակի մեկին ել: Հավատացիր, մայրիկ ջան, վոր չես ա-  
սում մարդի զնալ—զգանքս ա գալիս: Ել չասենք Ալեք-  
սանին, վոր նրան ըսկի, ըսկի չեմ ուզում:

ՄԱՐ.—Ե, բալա ջան, ամենքն ել եղպես են ասել: Մարդի գնալը քեզանով չի, արար աշխարհով ա: Ինձ ել վոր հորդ տվին՝ հլա խելքս բան չեր կտրում, լաց էիր ըլում, կշտից փախ-չում, ամա հետո ենքան սիրեցի... (ձեռքերը ամբարձելով)

## ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅԲ յեվ ԲԱՐՍԵՂ

ԲԱՐՄ.—Բարով տեսանք, սանամեր Մարիամ:

ՄԱՐ.—Բարին արևուդ, քավոր Բարսեղ:

ԲԱՐՄ.—Ելի բնչ՝ մեր ու աղջիկ դարդ դարդի լեք տվել:

ՄԱՐ.—Ինչ անենք, դարդից սավագի ուրիշ բան չունենք: Նըս-  
տիր, քավոր: (Աստղիկին) Աղջի, մի են բալիշլ դիր, քավո-  
րը հանգիստ նստի: (Աստղիկը կատարում ե),

ԲԱՐՄ.—(Աստղիկին) Զորանաս, Աստղիկ ջան: (Մարիամին) Դար-  
դի քամակից ուրախություն ել պտի ըլի, վոր իրարու սադ-  
գան:

ՄԱՐ.—Մեզ պես քյասիքներին ուրախությունը վճրտեղից ըլի,  
ԲԱՐՄ.—Ուրախությունը, բազի, իրա վոտովն ա դալիս: մենակ

թե գուոը պտի բաց անես, վոր ներս մտնի:

ՄԱՐ.—(Հառաչելով) Ախ եղ ել զրուստ ես ասում:

ՄԱՐ.—Եսպես սիրուն, ջերանի պես աղջիկ ունես, ընչի մարդի  
չես տալիս, գու լիլ մի ինամի ունենաս, աղջկանդ բախ-  
տավորությունը տենաս, ուրախանաս:

ՄԱՐ.—(Ավելի ծանր հառաչելով) Ե՛, ինչ ասեմ:

ԲԱՐՄ.—Դորդ, ես աղջիս բռնողանց Ալեքսանը կուզա աղջկանդ.  
ընչի չես տալիս: Յա չե կմտածես՝ Ալեքսանից լավ տղի  
տաս:

ՄԱՐ.—Քա, ով չի տալիս: (Յույց տալով Աստղիկին) Բէլ, վոր  
ինքը չուզա:

ԲԱՐՄ.—Ի՞նչ թհար չուզա... Աղջկան ի՞նչ խոսք կհասնի—կու-  
դա, չուզա, ծնողը ցանկացել ա, պրծավ գնաց:

ԱՍՏ.—(Կողմը) Են վաղ եր, վոր եշը կազ եր:

ՄԱՐ.—Կասա՝ պսակ չուզեմ, ուսումի պտի եթամ:

ԲԱՐՄ.—Դժոր:

ՄԱՐ.—Քա ի՞նչ իմանամ, կասա՝ կուսակցությունը ինձի Յերեան  
պտի ղրկա, եթամ կարգամ:

ԲԱՐՄ.—Յամ, գեղական աղջկան ի՞նչ կվայելի Յերեան, ուսում:

ԱՍՏ.—Ինչի գայելի չի, քավոր Բարսեղ: ի՞նչ ա, վոր աղջիկ ենք  
ծնվել, մարդ չենք:

ԲԱՐՄ.—(Մարիամին) Ես կուսակցականները սովորցրած կը լնեն:

(Աստղիկին): Բան չասինք, Աստղիկ ջան, աղջիկն իլ մարդ  
ա, համա աղջիկ ասած ամանաթ ապրանք ա. ինչքան լավ  
պահես, ենքան թանգ կծախվի, նրա մուշտարին շատ  
կըլի:

ՄԱՐ.—Շատ դրուստ կասա:

ԱՍՏ.—Շատ սխալ կասա: Աղջիկը ծախու ապրանք չի:

ԲԱՐՄ.—Դե լավ, թող քո խոսքը ըլի. մենք քեզ չենք ծախում,  
կուզենք Ալեքսանի հետ բախտավոր անենք: Ալեքսանին  
կուզեմ:

ԱՍՏ.—(Դրական) Զի:

ԲԱՐՄ.—Ալեքսանից լավին ես առնելու... Յանի միտդ ի՞նչ ա,  
աղջի:

ԱՍՏ.—Ալեքսանից վատին եմ առնելու, իմացմար: Յես մարդի  
գնալ չեմ ուզում:

ԲԱՐՄ.—Զըլի կուսանաց վանքն ես մտնելու:

ԱՍՏ.—(Անմիջապես) Կուսդպրոց եմ մտնելու:

ՄԱՐ.—(Զավթած բարկուրյամբ) Ախ, ախ, ես աղջկա լեզուն... Ես  
ել քո կոմսոմոլ լինելու շնորհքը: Աղջի, ամօթ արա, քավոր

Բարսեղը մեծ մարդ ա, նրա դիմացը եղակս չեն խոսա:  
ԲԱՐՄ.—Դրուստ կասա, բան, աղջկա լիզուն միքիչ կարճ կըլի,  
մեծի պատիվ կպահեն:

ՄԱՐ.—Ախ, քոռանամ լիս, են որվանից վոր ես աղջիկը գնաց  
կոմսոմոլների մեջ մտավ, ել սրա լեզվին հաղթել չի ըլի:

ԲԱՐՄ.—(Աստղիկին) Լավ, գու հիմի ինձ են ասա՝ ասենք կուսակ-  
ցությունը քեզ դրկեց Յերեան, շատ կարգացիր, շատ  
ուում առար. լանի վերջը ակուշեր ես ըլելու, լա չե յենե-  
ռալի կնիք:

ԱՍՏ.—(Կոպիս) Տավարած եմ ըլելու:

ՄԱՐ.—Վու, քոռանամ... (Աստղիկին, խիս հանդիմանական) Աղ-  
ջի, սկ երես, բոլ ելավ, ամօթ արա, քավոր Բարսեղի ա-  
ռաջ եղակս չեն խոսալ:

ԱՍՏ.—Քա ի՞նչ ասեմ, մարդիկը Աղջիկը ուրաւմ ե առնում նրա



համար, վոր գեներալի կին դառնա. (ծաղրական) Հայաստանի գեներալները Զանգեզուրի ճամպով վաղուց ճգել են, քավոր Բարսեղ:

ԲԱՐՄ.—(Կողմբ) Կոմսոմոլ, հա կոմսոմոլ... Չե, ախալեր, սա մեզ Իեզզակով կանի: (Մարիամին) Ե, սանամեր, իս ել մեր բարեկամության խաթըռ, ասի, մի մարդկություն արտծ ըլեմ, Աստղիկի բախտավորության պատճառ ըլեմ. վոր ճիմի չուզա, մեղքը իրա վիզը:

ՄԱՐ.—(Աստղիկին) Խելքի արի, աղջի, բոլ ելավ, անհամուս, իս մերդ, քավոր Բարսեղը, քո կշտին ենքան ել խաթը չունեն, վոր Կոտրվես... Բախտը իրա վոտով մեր դուռն ա եկել, ել ի՞նչ ես ուզում, տնավեր:

ԲԱՐՄ.—Ակեսանը կասա՝ Աստղիկի մոր հողերը կվարեմ, տիրություն կանեմ:

ՄԱՐ.—(Աստղիկին) Կիմանաս, աղջի, կիմանաս:

ԲԱՐՄ.—Կասա՝ Աստղիկին լավ խաս շորեր, տուփի կանեմ, նաև պալոն կառնեմ՝ շարի ճկատին. մորն ել ճեռից եկած լավությունը չեմ խնայի:

ՄԱՐ.—Կիմանաս, աղջի, կիմանաս: Ել ուժ չի մնացել զրես: Կովին դարը չկա, ես ցորենն ել մինչի գարուն Կհերիքի:

ԱՍՏ.—Ռվի և մեղավոր, մայրիկ, վոր դու մեր ուտելու ցորենը մատաղի տվիր, տերտերների վորը լցրիր...

ՄԱՐ.—(Կտրելով խոսք) Բա հորդ, ախպորդ գերեզմանները թողնեմ անորհնել մնան...

ԱՍՏ.—Սերմացու գարին ծախեցիր, հարսանիքներում ծաղի տվիր:

ՄԱՐ.—(Խիս) Սուս, բելթուն աղջիկ, բա ի՞նչ, Սարովի կնիկը ըլեմ, տասը մանեթ ել ա խալաթ չտամ. խալիս ի՞նչ կասե:

ԱՍՏ.—Բա վոր գարնանը ուտելու հաց չունենանք, եղ խալիս մեզ մի գրվանքա ալլուր կտա. ինչ ա՝ Սարովի կնիկն ես.

ՄԱՐ.—Բա պատիկս գետնով տամ... Խալաթը աղաթ ա:

ՄԱՐ.—Գենդ... Ջենդի, ամոթ արա, եղպես չեն խոսա, խալաթու պապենական աղաթ ա:

ԱՍՏ.—Լավ աղաթ: Տանը լեզած-չեղածը ծախիր, պարտքերի տակ ընկիր, անոթի մնա, ինչ ա՝ պապենական աղաթ ա: Այ, քանդիկն եղ պապենական աղաթները:

ՄԱՐ.—(Նաև խիս) Այ թաղեմ իս քեզ պես աղջիկը, եղ չաչտնակի լեզուդ շներին տամ:

ԲԱՐՄ.—Դե լավ, հիմի եղ մասալեն թողնենք: (Աստղիկին) Հիմի դու ինձ վերջնականը ասա, Ալեքսանին առնելու լես, թե չե. աղի կողմից եկիլ եմ՝ վերջնական խոսքը տանեմ:

ԱՍՏ.—Տասն անգամ ասի՛ չե:

ՄԱՐ.—Այ չոռը քեզ, անհամուս, քո մերը իս եմ, քո իրավունքը իմն ա: (Բարսեղին) Գնա ասա՛ կուզա: (Հեռվից զավում են հարամեյաց նիազածուրյան ձայներ):

ԱՍՏ.—Դե վոր, մայրիկ, Ալեքսանին դու ուզում ես, դու լել նըրան առ:

ՄԱՐ.—(Յասկ) Ջենդ, այ բութ թաղեմ: Չե, իս իմ գիտեցածը կանեմ:

ԱՍՏ.—Ես ել իմը. վերջը չփոշմանես (մոտենում ե սեղանին, մեմենարա թերթում մի զիրք):

ՄԱՐ.—(Բարսեղին, կամացուկ, գաղտնի ինչ-վոր բացարում ե: Բարսեղը հավանուրյան նշանեներ ե անում. Նվազախումբը, հարամեավորների ուրախ աղադակները հետզհետե մոտենում են):

ԲԱՐՄ.—Լավ, լավ, դու արխեկին միա, իս գիտեմ: ինչ թհար գործը գլուխ կբերեմ:

ՄԱՐ.—Ես ա հարսանքավորներն ել կալիս են: Ելի դու, քավոր Բարսեղ, մի բան տնես:

ԲԱՐՄ.—Արխեկին միա: (Վեր ե կենում, դուռը լայն բաց անում, դիմավորում հարամեավորներին): Համեցեք, համեցեք, (Ներս են մտնում) Անահիտ, Կիրակոս, Ալեքսան, Մարքար յել ուրիշ հարամեավորներ, Մեկը ուսից հար ե սկել խուզինք՝ մեջը լիքը զինու օւերով, զյուղական նիազախումբ, Այս տեսարանը բողնում ենք դերակատարների հայեցողուրյան, Կարող են պարել, ուրախանալ, սակայն առանց կարգը խանգարելու):

## ՏԵՍԻԼ 7

ԱՆԱՀԻՑ թեվանցուկ ԿիրԱԿՈՍԻ հետ մոտենում է Մարիամին

ԱՆ.—Թող համբուրեմ ձեռքդ, քո որհնությունը մեզ վրա լինի (համբուրում ե):

ՄԱՐ.—Ազրես, աղիկ ջան, բախտավոր ըլեք, մի բարձի ծերանաք (համբուրում ե Անահիտին):

ԲԱՐՄ.—Ե, տղերք, եսոր մեզ համար՝ շատ ուրախալի որ ե, վոր  
երկու ծաղիկ միացնում ենք, այսինքն՝ Անահիտին կիրա-  
կոսի հետ բախտավոր անում: Յեվ ելի պտի ասեմ, վոր ես  
սուրբ պատկով մի բարձի ծերանան, խորին ծերության ար-  
ժանանան:

(Հասարակուրյունից բացականչուրյուններ՝ ուռա, ուռա: Պար):

ԲԱՐՄ.—(Նարունակում ե) Տղերք, և ելի պտի ասեմ, վոր եսոր  
եստեղ, մեր ես ուրախության մի ուրիշ թագա ուրախու-  
թյուն ել ա ավելանում. այսինքն՝ վոր մենք ելի յերկու  
թառլան ծաղիկների կուրենք մոտկացներ Յեվ ելի պտի  
ասեմ, վոր Սարոյի աղջիկ Աստղիկին տալիս ենք Ալեքսա-  
նին ու բախտավոր անում: Հայ ասեք՝ ուռա (հասարակու-  
րյան կողմից ձայներ՝ ուռա ուռա),

ԲԱՐՄ.—(Բոնելով Ալեխանի ձեռքից՝ մոտեցնում ե Մարիամին) Ես  
ել քո փեսեն, սանամեր, որհնիր, թող բախտավոր ըլեն:  
ՄԱՐ.—Աստղիկիս տալիս եմ քեզ, Ալեքսան, առ, խերը տենաս,  
լավ պահես (կեղծ լաց ե լինում):

ԲԱՐՄ.—(Ալեխանին) Են բանը մի հանա:

ԱԼԵՔ.—(Գրպանից հանելով մատանին) Ես ել իմ նշանը:

ԲԱՐՄ.—(Աստղիկին) Դե, մոտ արի, Աստղիկ ջան:

ԱՍՏ.—(Բարսեղին) Ամոթ չըլի հարցնելը՝ եղ ինչ Աստղիկ և  
Ալեքսանի հետ բախտավոր եք անում:

ԲԱՐՄ.—Յա, դու յես, ելի:

ԱՍՏ.—(Զապահ բարկուրյամբ) Ջեռ եք առել ինձ, ինչ ե...

ԲԱՐՄ.—(Ձեռքը տանելով բերանին) Աղջի, սուս, ամոթ արա ես-  
քան խալիս մեջ:

ԱՍՏ.—(Հանդուզն) Ամոթ քեզ, քավոր Բարսեղ, վոր եսպես ոյին-  
ներ ես սարքում ու ինձ եսպես խալիս մեջ խալտառակ  
անում (Հասարակուրյան մեջ իրաւանցում յեվ զանազան բա-  
ցականչուրյուններ՝ վույ, ես ինչ բան եր, յեվ այլն),

ԲԱՐՄ.—(Հասարակուրյան) Հանաք ա անում, հանաք:

ՄԱՐ.—(Աստղիկին) Աղջի, սեերես, բոլ ելավ, վե կալ նշանը:

ԲԱՐՄ.—(Վերցնելով զինու բաժակը) Տղերք, դե մի խմենք ես  
թառլան ջխտի կենացը: (Ալեխանին) Վե կալ, Ալեքսան,  
զինու թասը, մի խմի Աստղիկի կենացը, վոր հավատա՝ ու-  
ղում ես իրան:

ԱԼԵՔ.—(Դոռող պօպայով) Տղերք, ինչպես վոր քավոր Բարսեղը  
բարեմաղթեց, թող ըլի իմ նշանած Աստղիկի կենացը:  
(խմում ե. ձայներ՝ Անուշ ելավ: անուշ, կեցցե):

ԲԱՐՄ.—(Գինու բաժակը տալով Աստղիկին) Դե, մի վեկալ, գու-  
յել խմի Ալեքսանի կենացը: Դե, վե կալ, պրծի:

ԱՍՏ.—(Ալզբում լնդդիմանում ե վերցնել բաժակը. Բարսեղը պըն-  
դում ե. իվեջու վերցնում ե: Յնձուրյան ձայներ յեվ նշաններ  
հասարակուրյան կողմից) Ահա ձեզ Ալեքսանի կենացը...  
(խմում ե բաժակը հատակին):

ՄԱՐ.—Վու, սե գար զլխիս... (խմում ե ձեռքերը զլխին յեվ  
մնումքարացած: Ընդհանուր իրաւանցում հասարակուրյան մեջ):

ԲԱՐՄ.—Ես ինչ կրակ եր:

ԱԼԵՔ.—Ի՞նչ, իմ կենաց թասը գետնով ես տալիս... Այ շան աղ-  
ջիկ, եղ դու քանի՞ զլուխ ունեցար:

I ՀՅՈՒԽ.—(Բաշելով Ալեխանի բեվից) Եթանք, Ալեքսան, թող  
եղ կոմսոմոլ լկրտվածին:

ԱԼԵՔ.—(Ազատելավ բեվերը) Թողեք, յես զրա... Մրտոյի տղա  
Ալեքսանը լայեղ անի, եսպես լկրտվածին ուզի, հլա նազ  
ծախի՞, կենացս թասը գետնով տամ...

II ՀՅՈՒԽ.—(Ալեխանին) Թող, Ալեքսան, գեղը աղջիկ չկմ...

ԱԼԵՔ.—Հլա հերիք չի՞ մեր ու ողջիկ անոթի սատկում են, ու-  
ղացի վարձք անեմ...

ԱՍՏ.—(Կտրելով խոսիր) Դե, բավական ե. քո ունենալով ինձ չհս  
կարա զարմացնի: Մեղքեսներին վարձք անելու դարը  
անցել ե:

ԱԼԵՔ.—Հմա, լավ: Գարնանը վոր ուտելու հաց չունենաք՝ կգաք  
իմ դուռը:

ԱՍՏ.—Յես քո դուռը կգամ քո հացը ուտելու, վոր բողադիս մը-  
նա, խեղգվեմ (հասարակուրյունը կամաց-կամաց դուրս ե  
գնում):

ԱԼԵՔ.—(Դոնելից) Յես Ալեքսանը չըլեմ, թե քու հախից չգամ  
(դուրս):

I ՀՅՈՒԽ.—Ափսոս ես նամուսով ոջախին, վոր եսպես աննամուս  
աղջիկ ունի: Հետ գիտի Սարո (Դուրս):

II ՀՅՈՒԽ.—Ամոթ մեր գեղին, վոր եսպես լկրտված աղջիկ ունի  
(դուրս):

ՄԱՐԹԱ.—Եթանք, ախպեր, եթանք, իմացել ելինք կոմսոմոլը  
հարող կըլի, ամա լկրտված աղջիկ կոմսոմոլը դուլում բան ա:  
(Աստղիկին) Բը, մամոս քո ջանին (դուրս):

ԱՆԱՀԻՅ.—(Թողենում ե Կիրակոսի բեվիր, մոտենում ե Աստղիկին) Ա-  
մոթ քեզ, Աստղիկ, յեթե մեռնելիր ավելի ուրախ կլինելի  
(դուրս):

**Ա.Ա.Տ.**—Զիմ մեռնում, վոր չուրախանաս:

**Մ.Ա.Ր.**—(Ձեռքերը ծնկներին խփելով) Վճռէ, աղջի՛, վճռէ, ևս ի՞նչ ու ուրդ բերիր իմ գլխին. ես ի՞նչ զուլում եր, ամառն: (Ձեռքերը ամբարձելով) Աստված, կրակ լից գլխիս, ազատվեմ ես տանջանքից, ես ցավից: Մարդ մինուճար աղջիկ ունենա ու եսքան խալիսի մեջ խայտառակ ըլի՛... Քա, եղ հեմ ես քաշել, աղջի, բա քու նամուսից, քու երեսից չես ամաչում... Սպանիր, մորթիր ինձ, խլսիր, ելի՛: (Դառնազին վողբալով) Հերդ կովում կորավ, ախպորդ դաշնակներն սպանին, սիրոս ենքան չի դադլել, ինչքան եսոր (վողբում ե):

**Ա.Ա.Տ.Ղ.Ի.Կ.**—Ո՞վ հ մեղավոր, ինչու զու քավոր Բարսեղի հետ եղապես ոյին սարքեցիք իմ գլխին: Ի՞նչ ես ուզում ինձանից, մայրիկ, ինչու յես սեացնում իմ ջահել կյանքը, զու ուզում ես աղջկանդ բախտավորացնել, մի ինձ ել հարցրու, թե յես ել բախտավոր կլինեմ, թե վոչ: Տավար խոժ չեմ, վոր նոխտա քցեք վեպս, ում ուզեք՝ տաք (հիկեկում ե):

**Բ.Ա.Ր.Մ.Ե.Դ.**—Ես ինչ դալաթ եր յես արի...:

### Վ.Ա.Ր.Ա.Գ.ՈՒ.Ի.Ց.Ր

## ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում ե զյուղական հարստի ոդա: Պատերը զարդարված են ընտիր գորգերով: Մուտքը զիմացի դռնից ե, իսկ աջ կողմի դուռը տանում ե թոնիրատուն: Պատերի տակ լայն տախտեր են՝ թավշյա բարձերով զարդարված: Կա նմանապես պահարան: Պատերից բարց են արված միքանի խմբապետների նկարներ, նմանապես կա կիրակսի հոր՝ գլավա Զանիրենցի մեծադիր նկարը, կործարը զարդարված ցարական շքանշաններով: Ազ կողմի պատից բարց ե արված մեծ մորակ արծաթապատ կոթով: Ըստինուր առմամբ կահավորությունը շոայտ ե, բայց իրերը հնացած, խունացած:

### ՏԵՍԻԼ 1

#### Ա.Ա.Ա.Հ.Ի.Ց. ԲԵՏՏԻ ՄԱՐԹՈՒ

**Ա.Ն.**—(Նստած կարում ե, ներս ե մտնում Մարքան:)

**Մ.Ա.Ր.Թ.Ա.**—(Կատաղի) Հարս, հարս, եղ փախան ի՞նչ թհար ես իստակել, հորթերի տակ սաղ կու յա:

**Ա.Ն.**—Մալրիկ, շատ ըեղարած եմ:

**Մ.Ա.Ր.Թ.Ա.**—Աչքս լուս, մենք ել քեզ հարս բերինք, վոր խանում... մի պես նստես: Եղ ժողով եթալիս ընչի՞ չես բեղարում...:

Դե, շուտ, պրծի, հլա եսոր լվացք ել կա:

**Ա.Ն.**—Մալրիկ, ասի, վոր շատ բեղարած եմ, ուժ չկա վրես:

**Մ.Ա.Ր.Թ.Ա.**—Համ, յեներալի աղջիկ, փայտան իստակելը քեզ լայիկ չի, չունքի կնյաղի թոռ ես:

**Ա.Ն.**—Ինչու յես եղաքես խոսում, մայրիկ, առողջ ժամանակս ամեն գործ ել արել եմ:

**Մ.Ա.Ր.Թ.Ա.**—Էսկի զատ, ել չես արել. մոփթա հաց ես կերել. այ բողազիդ կանգներ:

ԱՆ. — Ո՞հ, աստված, ես ինչ դժոխք ե:

ՄԱՐԹԱ. — Իբնչ, դժոխք ա, համ... Այ շան գել, հլա մի տես ինչ  
կխռամ:

ԱՆ. — Մարիկ, ինչու յես եղաես անպատիվ խոսքեր ասում ինձ,  
ՄԱՐԹԱ. — Զենդ, լիրը հարս. շատ լավ ել կանեմ. շան գել ես,  
քոփկու աղջիկ, հլա մի բան ել գենը: Հավան չես ես տա-  
նը, համ, դժոխք ա, համ... Դե վոր ըղենց ա, ուադ ըլի ը-  
տիոն. հայդա, քե պես հարսը իմ աղի շանը արժանի չի,  
կիմանամս, դու ինչ բանի յես:

ԱՆ. — (Ծանր հառաչելով) Ա՛խ...

ՄԱՐԹԱ. — (Սնմիջապես) Այ, չոռ, շան աղջիկ. դե ուադ ըլի, ել  
ինչ մուխտառ սփաթդ ցցել ես, զեմս կանգնել. ուադ ըլի,  
գնա, մորդ կշտին լավ կապրես. (ծաղրական) եթալուդ ել  
բերածդ ջեհեղը հետդ կտանես: Են արծաթն ու վոսկին, են  
աթլազն ու դումաշը, են խաս-խաս ջեջիմները, վոր մորդ  
տնից բերիր:

ԱՆ. — Ինչի՞ յես մորս աղքատությունը յերեսով տալիս:

ՄԱՐԹԱ. — Բա ի՞նչ, անոթի սատկում ելիր, ձեր տանը մի կա-  
տու ել ա չունելիք:

## ՏԵՍԻԼ 2

Նույնի յեվ Կիրակոս

ԿԻՐ. — (Մտնում ե վրդոված ՏՐԱՄԱԴՐՈՒՐՅԱՄԲ) Ես ի՞նչ բաս ա-  
ելի:

ՄԱՐԹԱ. — Այ սկ ըլեր են որը, վոր դու ես շան աղջկան մեր տու-  
նը հարս բերիր:

ԿԻՐ. — Ի՞նչ ա ելե, ի՞նչ, մի ասա տենամ:

ՄԱՐԹԱ. — Բա, ել ի՞նչ պտի ըլի. վոչ փայտան կիստկա, վոչ ջրի  
կեթա, վոչ կու կթափա, կուզա՝ խանում-խաթուն ուտա,  
խմա, ման գա...

ԿԻՐ. — Ի՞նչ...

ՄԱՐԹԱ. — Ժողովներ եթա...

ԿԻՐ. — (Ավելի բարձր) Իբնչ...

ՄԱՐԹԱ. — Տղերանց հետ խոսա, ծիծաղա...

ԿԻՐ. — (Կատաղի) Ի՞նչ... (Սնմիջին) Այ շան աղջիկ, ելի դու ժո-

ղով ես գնացել... (Բարձրացնում ե բռունքը, ուզում ե խր-  
փել. Սնանիսը սարսափից չսիրում ե վասների առաջ):

ՄԱՐԹԱ. — Մի տփա, տփա, ը ը ը, սիրս հովանա: Քոփկու աղ-  
ջիկ, ձեր ջինսը խավարի: (Դիվալին ժպիտով) Ի՞նչ կասես,  
ուսումնական հարս:

ԿԻՐ. — Դու եղ ժողովներից ձեռք քաշելու յես, թե չե: Այ շան  
ծնունդ, դու ըստի հարս ես եկել՝ տան գործ անես, թե ժո-  
ղովներ եթաս: Վոր ընդի յել խորհուրդ անեք, խալիսի դով-  
լաթը ինչ թհար թայանեք:

ՄԱՐԹԱ. — Զաթի զողը վոր տնից ելավ, յեզը յերդկից կանեն:

ԿԻՐ. — (Պատից ցած բերելով մտրակը) Թե մեկ ել իմացել եմ ժո-  
ղովներ ես գնացել, տղերանց հետ խոսացել (ցույց տալով  
զողներ), այ, կտեսնես, ես իմ ողորմած հոգի հոր՝ Զաթիրե-  
գի պլետն ա. ես իրա վախտին զեղական շատ ախմախնե-  
րի խելքի յա բերել, քեզ ել խելքի կբերի (մտրակով սպառ-  
հում ե):

## ՏԵՍԻԼ 3

Նույնի յեվ ՓիլիՊոս

ՓԻԼ. — Ես ի՞նչ բաս ա, կիրակս, հարսին կտիմես:

ԿԻՐ. — Ի՞նչ անեմ, շան աղջիկը ժողով կեթա, դախութիուն կանա:  
(Սնմիջին) Դե, ուադ ըլի ըստիան (Սնմիջին, նրա յետելից  
Մարքան դուրս են գնում):

ՓԻԼ. — Հավ, ես եղ ժողովներ իջաթ անողներին... փչացավ աշ-  
խարհը, ելի: Տո, ախակեր, կուսակցականը ժողով կանա,  
կոմսոմոլը ժողով կանա, ողլուշաղը ժողով կանա, հլա են  
ուսումնարանի քորփա տղեն ել ժողով կանա:

ԿԻՐ. — Դրուստ ա, ախակեր: Մեկ մնացել են ծծի երեխեքը. նրանք  
ել ժողով անեն՝ մեզի լուսավորեն:

ՓԻԼ. — Հլու մի հարցնող ըլի, ողլուշաղի ի՞նչ բանն ա ժողովը.  
Նրա խելքը ի՞նչ ա կտրելու, յա չե բեինը ի՞նչ ա մտնելու,  
ի՞նչի՞ մասին ա խոսալու...

ԿԻՐ. — Են ա՝ եթան, տղերանց հետ խոսան, ծիծաղան, այ, յես  
զրանց...

ՓԻԼ. — Են որը ես ողլուշաղների ջոջը եկել ժողովք ա արել, ասել

ա—ինչի կթորդեք ձեր տղամարդիկ ձեզի տփեն, Ասել ա—  
տփելը մեր կառավարութիւն զակոնով արգելված ա, իրա—  
վունք չկա:

Կիր.—ի՞նչ թհար իրավունք չկա... բա իմ կնկա իրավունքը ում  
ձեռին ա, ով ա կնկաս հաց ուտացնում, շոր անում, յիս,  
թե կառավարութիւնը:

Փիլ.—Ասել ա—հիմի հավասարութիւն ա, ազատութիւն ա:

Կիր.—Տո, թող, յես դրանց սարսադ գլուխը հորեմ. կնկանն ել  
հավասար արին մեզ, ելի... Դե են ա՝ մենք ել լաշակ կա—  
պենք, թող մեր կնանիք ել փափախ ծածկեն, Մալագեց  
զակոն. լավ հավասարութիւն ա: Հացս ուտա, շորս հազնի,  
տղերանց հետ խոսա, ծիծաղա, դախութիւն անա, ևս ել  
քե հավասարութիւն:

Փիլ.—Ե, ինչ կուզեն՝ թող ասեն: Կնիկ ասածդ քեչա լա, ինչքան  
տփեն՝ թողը կեթա, թամուզը կմա:

Կիր.—Սրդար խոսք, յես իմ հոգին:

Փիլ.—Են որը յես տանը չեմ ելե, Մովսեսանց աղջիկը կնկանս  
ժողովի կտանի: Գնացի ժողովի տեղը, դրանց ջոջը ասաց—  
Քեզ չի կարելի, ես ողուշազի ժողով ա: Դուս ելա, կիրա—  
կոս, քու արե, ես չոքերս դողում եր աջդու, ձեռքերս յեռ  
գալիս: Եկա տուն, ճիպուլ հազրի, մին ել եկավ:—  
Աղջի, ժողովում ի՞նչ կար—հարցրի:—Խոսացին—կասա:—  
Ի՞նչ խոսացին—կասա՝ ես կտօնավարութիւն որենքները բա—  
ցատրին: Ասի՝ լավ, հիմի յել յես քե մեր որենքները բա—  
ցատրեմ: Վրա պրծա, կիրակոս, տվի՛ հա տվի՛, են «ախ»  
արտվ, յես տվի՛, են «վախ» արտվ, յես տվի՛. ենքան տվի՛,  
ձեռքերիս իլլաջ չմաց, աչքերը թուավ քյալին:

Կիր.—Յես ել կուզեմ տփեմ, համա շան աղջկա վրա ջան չկա:

Փիլ.—Զե, կիրակոս, իմ կնիկ դլավ ջանավար զատ ա: Հիմի, ո—  
րեկան մի ծեծ նրա պորցին ա, մինչի ծեծեմ՝ ջանս չի դին-  
ջանա: (Պաւուա, խորհրդավոր) Եյ, կիրակոս, ջանիլ, սիրուն  
կնիկ ունես, մուզայթ կաց: Կնիկ ասածդ խամ ձի լա. Քիչ  
վոր նոխտեն թուլ թողիր՝ մեկ ել տեսար՝ կլուխը առավ ու  
զնաց, քեզ սարեսար ու չուեչուլ քցեց:

Կիր.—Սրխալին մնա, Փիլիպոս բիձա, հլա կիրակոսը մեռած չի,  
հլա նրա զլիին փափախ կա, լաչակ չի կապել: (Հանում ե  
պահարանից ողու շիքը, լցնում, խմում Փիլիպոսի հիւ—սաղ  
ըլիս—իրար բարեմաղբելով), Ե, քանի ես զործը բացվել ա,  
քեֆս շատ խարար ա:

Փիլ.—Ղողդ, քու ես հոգերի ախրը ի՞նչ ելավ:

Կիր.—Ի՞նչ պտի ըլի. բոնել են:

Փիլ.—Ինչքան տակովդ արած կըլիս:

Կիր.—Ըսկի, երկու զեսյատին: Յես ել կոմունիստ նախագահի-  
ախպոր աղջիկ առա, վարձք արի, եղ շների հետ խնամի ե-  
լա, ինչ ա թե՝ մեր բարեկամութիւն խաթրու ինձ պաշտ-  
պանեն: Ամա չե, ախպեր, վոնց տեսնում եմ, դրանցից իներ  
չկա: Դրանց կշտին վոչ մարդկութիւն կա, վոչ բարեկամու-  
թիւն. կռապաշտ զատեր են:

Փիլ.—Եդ ի՞նչ ես ասում, կիրակոս, լհը՝ Պլուտենց Ոհանը ան-  
ցած տարի աղին թողեց, վոր կոմսոմոլ ըլի, իրան պաշտ-  
պանի: Հիմի շան տղեն ենպես մի նաստայաշչի կոմսոմոլ  
ա ելե, վոր եղածներից մի բան ել զենն ա անցել: Ել հի-  
մի խեղճ հերը չի կարում մի գաղտնի բան բռնի, մի բան  
թագցնի: Ախպեր, չեմ հասկանում, թե ասես՝ գրանք կաշա-  
ռում են—չեն կաշառում. թե ասես՝ մի լավ բան ոհնեն—  
չասանք: Ել ի՞նչ զորութիւն, յա հունար ունեն ես շան  
տղա բայլշեկները, վոր ջահելները հոգիներն են տալիս  
դրանց համար:

Կիր.—Ցավու ել են ա, վոր սրանց կշտին ազդ ել չկա, վոր սա  
իմ ազգի մարդն ա, յես սրան պաշտպանեմ: Են որ մի թուր-  
քի հող բուզի տեղ որթա բրուդ ելին տվել մի շան տղա կոմ-  
սոմոլ ել բողոքում ա:—Այ տղա—կասեմ—սուս արա, թուրք  
չի, դրանց հերն ել անիծած: Կասա՝ թուրքը վհրն ա, մենք  
ախպեր ենք, Դե ի՞նչ կասես սբան: Թուրքի հետ ել ելի հն  
ախպեր: Ափսոս չելին մեր դաշնակցականները, նրանց ո-  
րոք թուրքը հողից չե, իրա զլիից ել եր ձեռք քաշել:

Փիլ.—Տո, ախպեր, նրանք որինավոր կառավարութիւն եին, ի-  
րանց ժողովուրդը, իրանց հայ ազգը կպաշտպանելին:

Կիր.—Ե, լից թասը (խմում են):

## ՏԵՍԻԼ 4

ՆՈՎՅԱՆ յել ՄԱՐԹԱ.

ՄԱՐԹԱ.—Բա ես ինպիզն ել ուր մնաց, Փիլիպոս ջան, վալ-  
աման, աման, (ձեռթեր բարձրացնելով) Ես ի՞նչ բանի յես,  
աստված, քա մի շուտ հասի, վալ, աման, աման:

Կիր. — Մեկնում է զրի քասը) Մի խմի, նաև:  
ՄԱՐԹԱ. — (Ազահուրյամբ խմում է) Ոֆ...  
Կիր. — Նաև...  
ՄԱՐԹԱ. — (Նայում է յերեսին, գդրում է):

Փիլ. — Դադու...  
ՄԱՐԹԱ. — (Նմանապես գդրում է):

Կիր. — Ելի կոմսոմոլ շան թուլեքը բեղամաղ արած կը լեն խեղճ  
մորս:

ՄԱՐԹԱ. — Ախ, կիրակոս, գեղականը շատ ա լը բացել, շատ, շատ,  
շատ:

Փիլ. — Մի ասա տեսանք, ի՞նչ ա ելե, ե...

ՄԱՐԹԱ. — (Հանդարտվելով) Քա, նոր կուժը վեր կալա, ասի մի  
վոտ ջրի եթամ (սրում է փիրք որջազգեսի փեռով), հա: Մին  
ել, ախպրի գլխին, են ծամերը կտրած ողլուշաղների ջոջը...  
են, են ի՞նչ ա կասեն նրան...

Կիր. — Հա, իմացա, կինբաժն:

ՄԱՐԹԱ. — Հա, են գրողի բաժինը կանցներ: Մին ել կանգ-  
նավ, դառավ ինձի. — Մալրիկ, հարս ունիս—ասավ: — Ու-  
նիմ—ասի: — Բա վոր ունիս, գնա ասա, թող գա իմ կուշը  
ժողովի: Յես ել յետ դառա ասի. — Բալա ջան, հարսս ողլու-  
շադ, դու ողլուշադ, են քե ի՞նչ ֆայդա. մի լավ ասլանի  
պես աղա ունիմ, նրան կղարկեմ քո կուշու:

Կիր. — (Ցինիկ հիացմունենով) Մալագեց նաև, եղ շատ լավ տեղին  
ես ասել:

ՄԱՐԹԱ. — Բա, գլավա Զալիբեգի կնիկ խոսքի տակ մնամ:

Փիլ. — (Ցինիկ) Իի, իսի, իսի, գրուստ, շատ լավ տեղին ես ասե.  
մենակ թե ինձ ել պտի զարկելիր նրա կուշու:

ՄԱՐԹԱ. — (Փիլիպոսին գուրզութալից) Դաղոն քե դուրբան, բա  
չեմ դարկեմ: Քա կիրակոս, եղ ասելս իմացա, մեկ ել են շան  
աղջիկներ, քյասիբ-քյուսուբի հարսներ վրա տվին: — Ի՞նչի  
մեր ջոջին անպատիվ կանհս: — Ասի՝ անպատիվն ել դուք  
եք, անհամուսն ել դուք եք: Քա մեկ ել են կապ կտրած  
Միտակը վրա պըճավ, կասա ինձի. — Լեզուդ քեզ քաշի, թե  
չե քե գիվան կտանեմ: Ախ, կիրակոս, աջոռ քիչ մնաց ես  
կուժը տայի գլխին:

Կիր. — Ո, շան աղա... շատ ել լավ կանելիր:

ՄԱՐԹԱ. — Վույ, աստված, աստված, ես ի՞նչ որի հասանք, աստ-  
ված, բա գլավա Զալիբեգի կնկան ասեն—լեզուդ քեզ քա-

շի... Յես կզարմանամ, ինչ թհար կհամբերես, աստված, ինչ  
թհար կը լի չես թափե սրանց գլխին... վուց, աստված, մեծ  
ե քու համբերությունը, մեծ, մեծ, մեծ:

Փիլ. — (Փնքինքում է):

Կիր. — Ե, բան չկա, նաև, թող ասեն, մեր աստվածը մեծ ա,  
հալբաթ մի որ իրա արդարությունը ցուց կտա:

ՄԱՐԹԱ. — Նաև են քե զուրբան, կիրակոս ջան, մի բան արեք, ես  
ինպիզը շուտ գա, քա ես խալիսը շատ ա լը բացել, շատ,  
շատ, շատ... Բա մի տենալիր են Սեթովի: կնկան. կանգնել,  
կասա ինձ: — Հիմի դուք ատամնիդ հանած գել եք, ել մեզ  
բան չեք կարա տնի:

Կիր. — Հույ, յես զրանց...

Փիլ. — Հալա մի դու տես շան կնկա լեզվին, ե:

ՄԱՐԹԱ. — Քա կնիկ, ասի, ախր քեզ ել գիդամ, քո մարդին ել  
գիդամ, նախրչի Սեթովի կնիկը չըս... դե են ա մարդդ չո-  
րան ա, չորան, չորան, չորան: Ախ, կրակ թափի ես կա-  
ռավարության ջանին, ինչ թհար վոր կրակեց մեր հոգին,  
մեր ապրուստը խից, տվակ շներին:

Փիլ. — Ամեն:

Կիր. — Հիմի սրանք ել վոր հարամ մալի տեր են ելե, կասենաս  
իրանց ա մնալու (կատաղի սեղմելով բռունցքներ), հայ յեր-  
են կառավարության... (Հանկարծ ներս ե մտնում Արամայի-  
սը) հոգուն մեռնիմ:

## ՏԵՍԻԼ 5

Նույնի յեկ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՐԱՄԱՅԻ. — (Ներս ե մտնում պապկան ձեռքին):

Կիր. — (Կեղծալոր ձեռքերով) Վայ բարով տեսանք, հազար բարով,  
ինամի Արամայիս...

Փիլ. — Բարով ես յեկել, ընկեր նախոգահ:

Կիր. — Վեր բարձրացիր, Արամայիս ջան, մի հանգիստ նստիր:

ԱՐԱՄԱՅԻ. — Շնորհակալ եմ (ներսում ե տախտի յեղրին):

Կիր. — Մի թաս արագի հետ ի՞նչպես ես (լցնում ե, մատուցում):

ԱՐԱՄԱՅԻ. — (Խմում է):

Կիր. — Յավաշ, ասեմ զակուսկի բերեն: (Մարքային, դոնից) Նա-

նե, մի Անորին ասա՞զակուսկի բերի: (Արամայիսին) Ե, Ա-  
 րամային ջան, լավ-լավ ես:  
 ԱՐԱՄ.-Շնորհակալ եմ: Դուք ի՞նչպես եք:  
 Կիր.-Թող աստված հաստատ պահի ես կառավարությունը, սադ  
 ըլին ձեզ պես կուսակցական ընկերները, մենք ել լավ կը-  
 լինք:  
 ԱՐԱՄ.-Ուրեմն գոհ եք կառավարությունից:  
 Կիր.-Ինչի չե:  
 Փիլ.-Յանի մարդ ել կըլի, վոր գոհ չըլի ես կառավարությու-  
 նից, հիմի մենք կասենաս յեթեմա դրախտում ենք ապրում:  
 Կիր.-Շատ արդար կառավարություն ա:  
 ԱՐԱՄ.- (Խեր-խեր նայում ե յերեսներին. նրանք նկատում են,  
 նեւըլում):  
 Կիր.-Արամայիս ջան, կասես տեղդ անհանդիստ ըլի: Թող հա-  
 րալիշը քաշեմ տակի, փափուկ ըլի:  
 ԱՐԱՄ.- (Հրաժարվելով) Նեղություն մի քաշի:  
 Փիլ.-Ինչ սեղություն. քեզ պես շազնիվ նախագան հլա մեր  
 գլխի վրա պտի նստի:  
 ԱՐԱՄ.-Շնորհակալ եմ շեղ պատվից, Փիլիպոս բիձա, տախտի  
 վրա ավելի հանգիստ եմ զգում ինձ:

## ՏԵՍԻԼ 6

Նույնի յեվ ԱՆՑՀԻՑ

ԱՆ.- (Ներս ե մտնում մատուցարանը ձերքին, վրան՝ հաց, տապակած  
 գառան միս, պանիր յեվ այլ բաներ: Նկատելով Արամայիսին՝  
 երա դեմքը պայծառանում ե, Արամայիսը նմանապես ամբողջ  
 ժամանակ նայում Անահիտին յել կարծես յերեսի վրա ուզում ե  
 կարդալ երա ներքինը. Մատուցարանը դնում ե սեղան վրա)  
 Բարե, հորեղբայր:  
 ԱՐԱՄ.- (Բարեկում ե, շարունակելով նայել երա մաւզած դեմքին) Ի՞նչպես ես, Անո:

ԱՆ.- (Ճեւիլով) Լավ եմ:  
 Կիր.- (Աչերով նամացի յե անում Անահիտին՝ դուրս գնալ):  
 ԱՆ.- (Չի նկատում):  
 Կիր.- Անո ջան, լավ կըլի եթաս քու ոթախը, դինջանաս:  
 ԱՆ.- (Նայում ե Արամայիսի աերին խորը, նեռանում անիսու):

ԱՐԱՄ.- (Դիտում ե յետելից, մինչեվ դուրս գնալը) Կիրակոս, ես  
 ի՞նչ որի յե ընկել Անահիտը:  
 Կիր.- (Նվորդած) Եսոր մի քիչ քեֆը խարար ա:  
 ԱՐԱՄ.- Եսոր, թե ամեն որ:  
 Կիր.- Ի՞նչ իմանամ... Յես միշտ իրան ասել եմ՝ Անո ջան, կեր,  
 խմի, ման արի, խրճիթ, ժողովներ գնա, ախար մենք ել  
 միքիչ բան կհասկնանք: Ես ժողովները վոր կանեն, մեր  
 գեղականին լուսավորելու համար ա. Ինչքան մեր գեղական  
 կնանիք լուսավորին, մեր ապրուստը դհա կլավանա:  
 Դրուստը չեմ ասո՞ւմ, Արամայիս:  
 ԱՐԱՄ.- (Անարբեր Կիրակոսի ասածներին) Ի՞նչի՞ որ որի վրա  
 մաշվում ե եղ աղջիկը:  
 Կիր.- Ի՞նչ ասեմ, Արամայիս ջան: Յես կասեմ՝ հստեղի հավեն  
 վրա չի գալիս: Թե չե՞ տան մեջ նրա համար ամեն ինչ  
 անպական ա: Ինչքան իմ զուվաթը կհասնի...  
 ԱՐԱՄ.- (Անմիջապես) Ծեծո՞ւմ ես, չե...  
 Կիր.- (Այլայլիմած) Վայ, ե՞դ ինչ խոսք եր, Արամայիս ջան,  
 ծեծել ի՞նչպես կարելի յա, խոմ հիմի նիկոլի կառավա-  
 րությունը չե:  
 ԱՐԱՄ.- Ե, ի՞նչ ասեմ, Կիրակոս, դու մեղավոր չես: (Ծանր հո-  
 գոց հանելով) Լավ: (Սկսում ե պապկայի մեջ ինչ վոր բալը  
 փնտուել):  
 Կիր.- Դե, ինչ մեղք պտի ունենամ: Նրան ծաղկի պես եմ  
 պահում:  
 Փիլ.- Յես ել տանը քանի անգամ ասած կիմ մեր ողլուշաղ-  
 ներին, թե՝ տանը քիչ գործ արեք, խրճիթ, ժողովներ գնա-  
 ցեք: Ամա, Արամայիս ջան, մեր մեջ ասած՝ ես մեր կնանիք  
 ել տավար զատ ես, բեկինները բան չի մտնի:  
 ԱՐԱՄ.- (Այդ ժամանակ խեր-խեր նայում ե Փիլիպոսի յերեսին,  
 վարը նկատելով՝ աչերը զցում ե ցած: Թուղթը մեկնելով Կի-  
 րակոսին) Ես ել քու հարկաթերթը:  
 Կիր.- (Մեկնելով ձեռքի) Շնորհակալ եմ, Արամայիս ջան, վոր  
 նեղություն ես քաշել, բերել: Ես տարի մեր վրա ինչքան  
 տուրք ա դրած:  
 ԱՐԱՄ.- (Անարբեր) Կարծեմ՝ երկու հարյուր տասյոթ մանեթ:  
 Կիր.- (Վերցնելով բոլորը՝ ձեռքի միաժամանակ մնում ե ոգում,  
 ապօած) Երկու հարիք տաս ոխտ մանեթ... Դե, Արամայիս,  
 միանգամից մեր տունը սրբեք, տարիք: Բա եսքան տուրք  
 կըլի:

նե, մի Անոյին ասա՝ զակուսկի բերի: (Արամայիսին) Ե, Արամայիս ջան, լավ-լավ ես:

ԱՐԱՄ. — Շնորհակալ եմ: Դուք ի՞նչպես եք:

Կիր. — Թող աստված հաստատ պահի ես կառավարությունը, սադ ըլին ձեզ պես կուսակցական ընկերները, մենք ել լավ կը-լինք:

ԱՐԱՄ. — Ուրեմն գո՞յ եք կառավարությունից:

Կիր. — Ինչի չե:

Փիլ. — Յանի մարտ ել կըլի, վոր գո՞յ չըլի ես կառավարություն-նից, հիմի մենք կասենաս յեթեմա դրախտում ենք ապրում:

Կիր. — Շատ արդար կառավարություն ա:

ԱՐԱՄ. — (Խեր-խեր նայում ե յերեսներին. նրանք նկատում են, նեվում):

Կիր. — Արամայիս ջան, կասես տեղդ անհանգիստ ըլի: Թող հա բալիշը քաշեմ տակդ, փափուկ ըլի:

ԱՐԱՄ. — (Հրաժարվելով) Նեղություն մի քաշի:

Փիլ. — Ինչ նեղություն. քեզ պես շազնիկ նախագան հլա մեր գլխի վրա պտի նստի:

ԱՐԱՄ. — Շնորհակալ եմ եղ պատվից, Փիլիպոս բիձա, տախտի վրա ավելի հանգիստ եմ զգում ինձ:

## ՏԵՍԻԼ 6

Նույնի յեվ ԱՆԱՀԻՏ

ԱՆ. — (Ներս ե մտնում մատուցարանը ձերքին, վրան՝ հաց, տապակած զառան միս, պանիր յեվ այլ բաներ: Նկատելով Արամայիսին՝ նրա դեմքը պայծառանում ե, Արամայիս նմանապես ամբողջ ժամանակ նայում Անահիտին յեվ կարծես յերեսի վրա ուզում ե կարգալ նրա ներքինը. Մատուցարանը դնում է սեղան վրա) Բարեկ, հորեղբայր:

ԱՐԱՄ. — (Բարեկովով ե, շարունակելով նայել նրա մաւլած դեմքին) Ի՞նչպես ես, Անո:

ԱՆ. — (Ճեմելով) Լավ եմ:

Կիր. — (Աշերով նախացի յե անում Անահիտին՝ դուրս գնալ):

ԱՆ. — (Չի նկատում):

Կիր. — Ան ջան, լավ կըլի եթաս քու ոթախը, դինջանաս:

ԱՆ. — (Նայում ե Արամայիսիչ ամերին խոր, նեռանում անխոս):

ԱՐԱՄ. — (Դիտում ե յետելից, մինչեվ դուրս գնալը) Կիրակոս, ես ի՞նչ որի յե ընկել Անահիտը:

Կիր. — (Նիորիած) Եսոր մի քիչ քեզը խարար ա:

ԱՐԱՄ. — Եսոր, թե ամեն որ:

Կիր. — Ի՞նչ իմանամ... Յես միշտ իրան ասել եմ՝ Ան ջան, կեր, խմի, ման արի, խրճիթ, ժողովներ գնա, ախար մենք ել միքիչ բան կհասկնանք: Ես ժողովները վոր կանեն, մեր գեղականին լուսավորելու համար ա. ինչքան մեր գեղական կնանիք լուսավորիլին, մեր ապրուստը դիա կլավանա: Դրուստը չեմ ասո՞ւմ, Արամայիս:

ԱՐԱՄ. — (Անտարբեր Կիրակոսի ասածներին) Ինչի՞ որ որի վրա մաշվում ե եղ աղջիկը:

Կիր. — Ի՞նչ ասեմ, Արամայիս ջան: Յես կասեմ՝ եստեղի հավեն վրա չի գալիս: Թե չե՝ տան մեջ նրա համար ամեն ինչ անպական ա: Ինչքան իմ զուգաթը կհասնի...

ԱՐԱՄ. — (Անմիջապես) Ծեծո՞ւմ ես, չե...

Կիր. — (Ալլայլիքած) Վայ, ե՞դ ինչ խոսք եր, Արամայիս ջան, ծեծել ի՞նչպես կարելի յա, խոմ հիմի Նիկոլի կառավարությունը չի:

ԱՐԱՄ. — Ե, ինչ ասեմ, Կիրակոս, դու մեղավոր չես: (Մանր հոգ հանելով) Լավ: (Սկսում ե պապիկայի մեջ ինչ վար բուզը փետուիլ):

Կիր. — Դե, յես ինչ մեղք պտի ունենամ: Նրան ծաղկի պես եմ պահում:

Փիլ. — Յես ել տանը քանի անգամ ասած կլիմ մեր ողլուշաղ-ներին, թե՝ տանը քիչ գործ արեք, խրճիթ, ժողովներ գնա-ցեք: Ամա, Արամայիս ջան, մեր մեջ ասած՝ ես մեր կնանիք ել տավար զատ են, բեկինները բան չի մտնի:

ԱՐԱՄ. — (Այդ ժամանակ խեր-խեր նայում ե Փիլիպոսի յերեսին, վար նկատելով՝ աշեր զցում ե ցած: Թուղթը մեկնելով Կի-րակոսին) Ես ել քու հարկաթերթը:

Կիր. — (Մեկնելով ձեռք) Շնորհակալ եմ, Արամայիս ջան, վոր նեղություն ես քաշի, բեկին ես տարի մեր վրա ինչքան տուրք ա դրած:

ԱՐԱՄ. — (Անտարբեր) Կարծեմ՝ երկու հարյուր տասյոթ մանեթ:

Կիր. — (Վեցներով բուզը՝ ձեռք միաժամանակ մնում ե ողում, ապօած) Երկու հարիք տաս ոխտ մանեթ... Դե, Արամայիս, միանգամից մեր տունը սրեք, տարեք: Բա եսքան տուրք կըլի:

ԱՐԱՄ.—(Անտարբեր, սառը) Դու տալիս ես քո ունեցածից:  
Կիր.—Եղ վոր կասես՝ ունեցած, ի՞նչ ե մեր ունեցածը... (Փիլի-  
պոսին) Դու ասա, Փիլիպոս, մեղ ըսկի զատ ա մնացել:  
Փիլ.—(Փերինը ունեցած յերկիցի բառեր):

ԱՐԱՄ.—Ի՞նչ ես լաց ըլում... Բա 12 լուծ յեղներդ իմն ա:  
Կիր.—Լավ, ախալեր, մի 10—12 լուծ յեղ, ել...  
ԱՐԱՄ.—Բա մատակներդ:  
Կիր.—Մի 5—6 գլուխ ել թող մատակ ըլի, ել...  
ԱՐԱՄ.—Կովերդ:  
Կիր.—Բա կով ել վոր չունենանք, ի՞նչով ապրենք: Դու գիտաս  
յես եղ կովերից խեր ունեմ... 20 սել խոտ եմ կերցրել, ա-  
մա ստորագրություն կտամ, թե յես կովերից մի գրվանքա  
յեղ եմ վե կալե:  
ԱՐԱՄ.—Բա վոչխարներդ:  
Կիր.—Վոչխար կասա... Տո ի՞նչ վոչխար ա մնացել մեղի, եւ...  
են առաջ եր, վոր աշնան դոչերը բաց կթողնելինք 8—9  
հարեր վոչխարի վրա:  
ԱՐԱՄ.—Լավ, յեթի անբավական ես, կարող ես դիմում տալ:  
Կիր.—Դե, են ա, դու մեր նախագահն ես, քեզ ել դիմում եմ:  
Բա սա խղձտանք ա...  
ԱՐԱՄ.—(Անտարբեր Կիրակոսի ասածներին, մեկնում ե մեկ ուրիշ  
բուլը):  
Կիր.—Ես ի՞նչ թուղթ ա:  
ԱՐԱՄ.—Հողային հանձնաժողովից ա:  
Կիր.—(Ակամայից վերցնելով) Ի՞նչո՞ւ մասին ա:  
ԱՐԱՄ.—Քո հողերի մասին վիճելի հարցեր կան, պետք և պար-  
զել կդնաս հողային հանձնաժողովի նախագահ՝ Պիպողենց  
խաչոյի մոտ:  
Կիր.—Ճամ, ես ի՞նչ բան ա:  
ԱՐԱՄ.—Դե, լավ, չիմանալու մի տա: Կեղտը թագցնել չես կա-  
րող:  
Կիր.—(Փիլիպոսին) Ախալեր, ես ի՞նչ թհար աշխարհ ա... (Արա-  
մայիսին) Ի՞նչ ենք թագցրել ե... Սաղ աշխարհն ել զիտա,  
վոր գեղական հողերի կեսից ավելին մերն եր. հիմի թողել  
եք մեղի մի կակոյ նիբուտ 6—7 զեսյատին նալուդ հող,  
են ել եղավ կեղտա... Դե, են ա միանգամից ասեք. —Կիրա-  
կոս, դու իրավունք չունիս հաց ուտելու, գնա, մեռիր:  
ԱՐԱՄ.—Ի՞նչ ավելորդ խոսքեր ե կանես, Կիրակոս, մի բան  
որենքով պտի ըլի, թե չե՞:

Կիր.—Թող որենքով ըլի, ախալեր, բան չասինք, սաղ ըլի ես կտ-  
ուավարության որենքները: (Քծնող տնօնվ) Բա, Արամացիս  
ջան, մեր բարեկամության մեջ ել մի որենք պտի ըլի, թե  
չե՞: Յես ել եսոր ձեր փեսեն եմ, մի ոտար մարդ չեմ:  
ԱՐԱՄ.—(Քմծիծաղ) Հասկանում եմ: Ամա լավ կանես, եղափսի  
գործերի համար մեր բարեկամության վրա հուզմեր չունե-  
նաս:  
Կիր.—Քու տակլով՝ բարեկամություն չկա աշխարհիս յերեսին:  
ԱՐԱՄ.—Կա, մենակ վոչ անարդար գործերի համար:  
Կիր.—Արամացիս ջան, դու յել ենակես կխոսաս, կասենաս, են ա  
ժամում կանգնած աղոթք կանենք:  
ԱՐԱՄ.—Հենց են ժամում աղոթք անողների համար որենք ու  
արդարություն չկա:  
Կիր.—Ի՞նչ ասեմ, ախալեր, թող քո խոսքը ըլի: Մի երկու կտոր  
փալաս ա մնացել, են ել կուղեք քաշեք՝ տարեք: Թող մենք  
ել մնանք հացի կարոտ: Դու վոր քու հալալ ախպոր աղջլ-  
կան չես խղճում, ել յես ի՞նչ ասեմ:  
ԱՀԱՄ.—Յես իմ ախպոր աղջկան մենակ մի բանի համար եմ  
խղճում, վոր քո նշանածն ե:  
Կիր.—Փոշման եք, հա... Դե լավ, յետ առեք, Կուղեք նրա աղջլ-  
կության դիմաց ել մի քանի հարյուր մանեթ փող տամ:  
ԱՐԱՄ.—(Վշա պրծնելով) Լիբր... (Փիլիպոսը միջամտում ե),  
Փիլ.—Ոծոթ ա, տղերք, ես ի՞նչ պատմէից ձեզ պես քաղցր խնա-  
միների մեջ:  
Կիր.—Լիբր ել եղանք, հա... Շնորհակալ եմ: (Փիլիպոսին) Ես ել  
իմ արած մարդկության համար, վոր սրանց փեսա ելա:  
ԱՐԱՄ.—Այ, յես քեզ մարդ ասողին... Լիբր, սրիկա...  
Կիր.—Ասա, ախալեր, ասա. հիմի ուժը ձերն ա, զոռը ձերն ա:  
ԱՐԱՄ.—Հիմի յեմ հասկանում քո մտքերը, քո ծրագիրները, քո  
աղջկկ առնելու նպատակը: Հիմի ավելի յեմ համոզվում,  
վոր ձեղպեսների համար վոչ մի ապնվություն չկա: (Խենք  
իրան) Ե, ի՞նչ մարդու հետ եմ խոսում: (Հեռանում ե, դռնից  
Կիրակոսին) Թող (դուրս):  
Կիր.—Թքի, թքի, մենք ենք մեղավոր, վոր իրա ժամանակին,  
քու եղ գլուխը շան փայ չարինք: Ե, բան չկա, հալբաթ մի  
որ ել մեր կողմը գարուն կղա: (Սեղմելով բռունցիները կա-  
սաղի) Այ յես ձեր... կարմիր շներ...

## ՏԵՍԻԼ 7

Նույնի յեվ ԱՆԱՀԻՏ

- ԱՆԱՀԻՏ. — Բիծան մւր ա, թող գա ձվաձեղ ուտի:
- Կիր. — (Կատաղի) Ալ, քո բիծան թող զհար ու մհար ուտի:
- Ան. — Յա...
- Կիր. — Յա ու չուս Մի մոտ արի:
- Ան. — (Վախեցած, բարացած դիրեվ շարունակում է կանգած մնալ):
- Կիր. — Քեզ ասում եմ մոտ արի, շան ծնունդ:
- Ան. — (Վախելով մի բայլ է անում դեպի Կիրակոսը):
- Կիր. — Ալ յես քու... (Հարձակվում է կատաղի, բռնում է յերկու քեվերից, ուժգին սեղմում):
- Ան. — (Ճշում է զուսպ):
- Կիր. — (Սկիլի յե սեղմում, տանջում, կրնացնում է ատամները):
- Փիլ. — (Ցանկանում է միջամտել):
- Ան. — (Աղերսպին) Ի՞նչ ես անում, Կիրակոս:
- Կիր. — Ալ յես քու... Շան ծնունդ:
- Ան. — Ինչու յես տանջում ինձ...
- Կիր. — Ենպես, քեփս ե ուզում: (Հանկարծ սպրում է զած, բարձնում է վոտքը հարվածելու, Փիլիպոսն անմիջապես բրոնում է):
- Փիլ. — Ամոթ ա, Կիրակոս, թող:
- Կիր. — Թող, մի յես դրա...
- Փիլ. — (Անահիտին) Գնա, աղջի:
- Ան. — (Հեռանում է նեկեկալով):
- Փիլ. — (Կիրակոսին) Լավ, մեղք ա, խղճա:
- Կիր. — Խղճամ, մեղք ա, բա ինձ խղճացե՞լ են, վոր յես դրանց խղճամ. բա յես մեղք չբմ... Ըէլ, ես ել քեզ կուսակցականի ախպոր աղջիկ առանք, վարձք արինք, վոր եսոր ել ինձ մարդատեղ չդնեն, ինձ թալանեն, հլա ինձ լիրը ել ասեն:
- Ալ, կոսպաշտներ, թե ձեզ համար մարդկություն չկա, իմ կշտին ամեննին չկա: Մազ կարողությունս սրբին, տարան, տներս զաֆթին, հիմի յել հարյուրներով տուքքեր են դնում:
- Դրեք, դրեք, բան չկա. հլա զլավա Զալիբեզի թողած վոսկիների բարաքաթը չի խլսել, չի յել խլսի: Զալիբեզի տղա Կիրակոսը մարդ ա, մարդ, ձեզ պես շան ծնունդ չի: Նրա հերը գորեռնատորի հետ հաց ա կերիլ, հաց, հաց: (Չեռքերը

ուժգին խփում է սեղանին, հետո զլուխը ցած դնում ու մորենչում):

- Փիլ. — Կիրակոս ջան, հանգստացիր:
- Կիր. — Ի՞նչ թհար հանգստանամ, Փիլիպոս բիձա, ի՞նչ թհար. վոր մի քնձռոտ Արամալիս, մի շան լակոտ, վոր հերը գեղամիշին ֆահլառություն կաներ, հիմի ըլի գեղի նախագահ, նստի գիվան, մեզի յել հրամաններ տա, ասա՝ գնա քու հողերի մասին Պիպողենց Խաչուի կուշտ:
- Փիլ. — Ի՞նչ անենք, հլա պտի համբերենք:
- Կիր. — Տո, Պիպողենց Խաչոն, Զողանենց Ոհանը, Զնոյինց Մթոն, եղ սարի չոբանները, եղ յաբանի արջերը եթան գրել, կարգալ սովորին, մեր զալրությունը բռնեն, մեր վրա ծիծաղան, բա սա ելավ որենք, արդարություն:
- Փիլ. — Հեյ գիտի աշխարհ... Պիպողենց Խաչոն հողալին գործի նախագահին...
- Կիր. — (Խիս կատաղի սեղմելով բլունցները) Ալ յես ես կառավարության որենքները... Ինչքան անում եմ տակից քանակեմ, չի ըլում, ախպեր, վրայից քանդեմ, ելի չի ըլում: Չե, յես հույսս կորցնում եմ:
- Փիլ. — Դե, մի հուսահատվի, յերեխա չես, ես կառավարության վաղեն մի յերկու ամիս ա: Ինգլիզը գալու յա, իր աղին դնի Նիկոլի թախթին:
- Կիր. — Տո, ախպեր, եղ ինգլիզը ասում եք գալու յա, գալու յա:
- Փիլ. — Չե, ես անգամ հաստատ գալու յա: Են որը տերտերն առաց, սուտ չկա:
- Կիր. — Ե, լից թասը, տեսնենք (խմում է):

## ՏԵՍԻԼ 8

Նույնի յեվ ԱԼԵՔՍՈՒՆ

- ԱԼԵՔ. — (Մտնում է հարբած, իրի տակ յեղանակելով) Կիրակոս ջան, յես քու հոգուն մեռնեմ:
- Կիր. — Յա ջան, Ալեքսան ջան: Ես սաղ որը վժըտեղ ես:
- ԱԼԵՔ. — Գդակիս տակին եմ:
- Կիր. — Տեսնում եմ:

## ՏԵՍԻԼ 7

Նույնի յել ԱՆԱՀԻՏ

**ԱՆԱՀԻՏ.** — Բիծան ուր ա, թող գա ձվածեղ ուտի:

**Կիր.** — (Կատաղի) Այ, քո բիծան թող զհար ու մհար ուտի:  
Ան. — Յա...

**Կիր.** — Յա ու չոռ: Մի մոտ արի:

**Ան.** — (Վախեցած, բարացած դիրեկտ շարունակում է կանգած միալ):

**Կիր.** — Քեզ ասում եմ մոտ արի, շան ծնունդ:

**Ան.** — (Վախելով մի բալ է անում դեպի Կիրակոսը):

**Կիր.** — Այ յես քու... (Հարձակվում է կատաղի, բռնում է յերկու քեներից, սւժին սեղմում):

**Ան.** — (Ճշում ե զուալ):

**Կիր.** — (Ավելի յե սեղմում, տանջում, կրնացնում է առամբերը):

**Փիլ.** — (Ցանկանում է միջամտել):

**Ան.** — (Աղերսագին) Ի՞նչ ես անում, Կիրակոս:

**Կիր.** — Այ յես քու... Շան ծնունդ:

**Ան.** — Ինչու յես տանջում ինձ...

**Կիր.** — Ենպես, քեփս ե ուզում: (Հանկարծ սպրում է ցած, բարձրացնում է վոսքը հարվածելու, Փիլիպոսն անմիջապես բռնում է):

**Փիլ.** — Ամոթ ա, Կիրակոս, թող:

**Կիր.** — Թող, մի յես դրա...

**Փիլ.** — (Անահիտին) Գնա, աղջի:

**Ան.** — (Հեռանում է հետեկալով):

**Փիլ.** — (Կիրակոսին) Լավ, մեղք ա, խղճա:

**Կիր.** — Խղճամ, մեղք ա, բա ինձ խղճացել են, զոր յես դրանց խղճամ. բա յես մեղք չեմ... Ըսլ, ես ել քեզ կուսակցականի ախպոր աղջիկ առանք, վարձք արինք, զոր եսոր ել ինձ մարդատեղ չդնեն, ինձ թալանեն, հլա ինձ լիրը ել ասեն: Ախ, կռապաշտներ, թե ձեզ համար մարդկություն չկա, իմ կշտին ամեննին չկա: Սաղ կարողությունս սրբին, տարան, տներս զաֆթին, հիմի յել հարլուրներով տուրքեր են դնում: Դրեք, դրեք, բան չկա: հլա զլավա Զալիբեզի թողած վոսկեների բարաքաթը չի խլսել չի յել խլսի: Զալիբեզի տղա Կիրակոսը մարդ ա, մարդ, ձեզ պես շան ծնունդ չի: Նրա հերը գորենատորի հետ հաց ա կերել, հաց, հաց: (Ձեռները

ուժգին խփում է սեղանին, հետո գլուխը ցած դնում ու մորնչում):

**Փիլ.** — Կիրակոս ջան, հանգստացիր:

**Կիր.** — Ի՞նչ թհար հանգստանամ, Փիլիպոս բիծա, ի՞նչ թհար. վոր մի քնձուտ Արամայիս, մի շան լակոս, վոր հերը գեղամիշին փահառություն կաներ, հիմի ըլի գեղի նախագահ, նստի պիվան, մեզի յել հրամաններ տա, ասա՝ գնա քու հողերի մասին Պիպողենց Խաչոյի կուշտ:

**Փիլ.** — Ի՞նչ անենք, հլա պտի համբերենք:

**Կիր.** — Տո, Պիպողենց Խաչոն, Զոգանենց Ոհանը, Զնոյենց Մթոն, եղ սարի չորանները, եղ յարանի արջերը եթան գրել, կարգալ սովորին, մեր զալըությունը բռնեն, մեր վրա ծիծաղան, բա սա ելավ որենք, արդարություն:

**Փիլ.** — Հետ գիտի աշխարհ... Պիպողենց Խաչոն հողային գործի նախագահ...

**Կիր.** — (Խիս կատաղի սեղմելով բռնցքները) Այ յես ես կառավարության որենքները... ինչքան անում եմ տակից քանակեմ, չի ըլում, ախպեր. վրայից քանդեմ, ելի չի ըլում: Զե, յես հույսս կրցնում եմ:

**Փիլ.** — Դե, մի հուսահատվի, յերեխա չես, ես կառավարության վալեն մի յերկու ամիս ա: Ինգլիզը գալու յա, գալու յա, դնի Նիկոլի թամթին:

**Կիր.** — Տո, ախպեր, եղ ինգլիզը ասում եք գալու յա, գալու յա, ես վեց տարի յա հլա պտի գա:

**Փիլ.** — Զե, ես անգամ հաստատ գալու յա: Են որը տերտերն ասաց, սուտ չկա:

**Կիր.** — Ե, լից թասը, տեսնենք (խմում է):

## ՏԵՍԻԼ 8

Նույնի յել ԱԼԵՔՍՈՆ

**ԱԼԵՔ.** — (Մտնում է հարբած, բի տակ յեղանակելով) Կիրակոս ջան, յես քու հոգուն մեռնեմ:

**Կիր.** — Հա ջան, Ալեքսան ջան: Ես սադ որը վժրտեղ եմ:

**ԱԼԵՔ.** — Գդակիս տակին եմ:

**Կիր.** — Տեսնում եմ:

ԱԼԵՔ.—Ախատեր տղերանց հետ քեզ կիլ անում:  
ԿԻՐ.—Շատ ել լավ ես անում: (Տալով զինու բաժակը) Դե, մի  
խմի:  
ԱԼԵՔ.—Ախ, Կիրակոս ջան, են որվանից դեսը սաղ գեղականի  
առաջ եղել եմ մասիսարա:  
ԿԻՐ.—Ի՞նչի՞...  
ԱԼԵՔ.—Երա համար, վոր են լկրտված կոմսոմոլ Աստղիկի ա-  
րարմունքը թողինք իրան մնա, ես բանը ի՞նչ թհար ու-  
տացնեմ իմ պատվին, Կիրակոս, վոր մի շան աղջիկ, մի  
լկրտված կոմսոմոլ ինձ վրա ծիծաղա:  
ԿԻՐ.—Պահ, տնաշեն, յես ել ասի ինչ կա: Տո, այնումդ ել մի  
քցի:  
ԱԼԵՔ.—Ախ, Կիրակոս, մի վախտ այնումս չելի քցում, ամա հի-  
մի կտեսնիմ, ես գեղական երես առած լակոտ-լուկուտները  
շատ են մասիսարա քցում ինձ: Են կապ կտրած Միսակը  
քանի պատահում ա, աչքերիս ա մտիկ տալիս, քթի տակին  
ծիծաղում. բա յես եղ շան տղի մասիսարեն ըլիմ:  
ԿԻՐ.—Դու հիմի քրասար ասա, եղ աղջկան կուզես ձեռք քցես:  
ԱԼԵՔ.—Հա, Կիրակոս,  
ԿԻՐ.—Բաշ ուստա: Տո քու ուզոծը թող մի աղջիկ ըլի: (Զենքը  
խփելով կրծին) Ես ջանս մեռնի, թե են աղջկան եզուց  
քու կշտին չքնացնեմ:  
ԱԼԵՔ.—(Ցինիկ) Ջան Կիրակոս (Համբուրում ե):  
ՓԻԼ.—Ալեքսան ջան, ախար եղ լկրտված կոմսոմոլ աղջիկները  
միքիչ կասկածավոր են ըլում, մեկ ել՝ լավ խոնարհ հարս  
չեն ըլի:  
ԱԼԵՔ.—(Ցինիկ) Փա, տնաշեն, կասենաս նրան յես ել խոնարհ  
հարս եմ տանում: Բան չկա, հլա մի երկու, իրեք տմիս  
կպահեմ—մի լավ կլշտանամ, ընդուց դենը՝ սաղ ըլի ես  
կառավարության որենքները, ուզածդ վախտը բրախի, թա-  
զեն առ:  
ՓԻԼ.—Շան տղերք, քեֆը ձերն ա, ափսոս իմ ծերության վախ-  
տը եկան եղ լավ որենքները: Թե յես ել ձեղ պես ջահել  
կըլելի...  
ԿԻՐ.—Բեղ ի՞նչ ա ելի: Դու չես իմանում, վոր առածը ասում  
ա—մեկ ջահելությանդ, մեկ ել ահելությանդ, Հը, մի 15  
տարեկան կոմսոմոլ աղջկա հետ ի՞նչպես ես... Ախար հիմի  
հավասարություն ա:

ՓԻԼ.—(Ցինիկ ծիծաղում ե) Խի, խի, խի շատ լավ կըլի, խի,  
խի, խի, չեք կարմ, տղերք, ի՞նձ ել բախտավորացնեք:  
ԱԼԵՔ.—Կիրակոս ջան:  
ԿԻՐ.—Հա ջան, Ալեքսան:  
ԱԼԵՔ.—Դե, մի ասա եղ շան աղջկան ի՞նչ թհար ենք ձեռք քցե-  
լու, թե չե վախենամ, եղ անուշ պատառը են կապ կտրած  
Միսակը վաւելի:  
ԿԻՐ.—Չե, եղ անուշ պատառի վայելելը հլա քեզ կպատկանի. Վոր  
կշտացար, նոր քցի նրա առաջ:  
ԱԼԵՔ.—(Ցինիկ) Հա, հա, հա, գրուստ, չե վոր հիմի հավասա-  
րություն ա: Վախ, Կիրակոս ջան, յես քո հոգում մեռնիմ:  
ԿԻՐ.—Յես Կիրակոսը չեմ ելե, թե եղ գործը գլուխ չբերեմ: Դու  
մի հլա հարցուը մանեթ հազրի:  
ԱԼԵՔ.—Եկավ:  
ԿԻՐ.—Թխի գա: Փիլիպոս, կտրի (Փիլիպոսը կտրում ե):

#### ՎԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

## ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը նույնն է, ինչ առաջին գործողության ժամանակ

### ՏԵՍԻԼ 1

ՄԱՐԻԱՄ, ԲԱՐՄԵԴ

ԲԱՐՄ.—Ելի դուք քոնն ես ասում. բա են վախտը լավ ե՞ր, զոր մի գլավա Զալիբեզ, Մելիքանց Սեթո, սաղ գեղի հողերը զավթել ելին. Չե, իսու ու իմ աստոծ, զոր բալշակիկները դրուստ են. քո Աստղիկը են վախտը վոր չհամաձայնվեց մեզ հետ ու կուլակ Ալեքսանին վոնդեց, շատ լավ արավ:

ՄԱՐ.—Դրուստ ա, հմի ինձ ել են լավ հող տվել... ամա ասում են, զոր սրանք լերկար չեն մնա. հրեն, ասում են, ինգլիկը գալիս ա, դաշնակներն ել ձեռք ձեռքի տված...

ԲԱՐՄ.—Եղ բոլորը կիրակոսի, Ալեքսանի ու նրանց նմանների հեքիաթն ա, բայց զոչ տեսանեն. Յերեի քեզ ել վախեց բել են:

ՄԱՐ.—Ի՞նչ թագցնեմ, հա. զե քավոր Բարսեղ, դուն մի խելք սովորցրու... ի՞նչ ասեմ... թե ասեմ՝ լավ են անում, բալքի վատ են անում. թե ասեմ վատ են անում, բալքի լավ են անում... միտք եմ անում...

ԲԱՐՄ.—Ա՛յ թե ահ են տվել, հա... մեկ պարզ ասա, այ կնիկ, տենամ ի՞նչ են ասել, զոր են գլորա խորհուրդ տամ:

ՄԱՐ.—Քավոր Բարսեղ, ի՞նչ ծածկեմ... յիս խոսք տվի կիրակոսին ու Ալեքսանին գործը հաջողացնեմ ու Աստղիկին...

ՄԱՐ.—Ի... Հրեն սաղ գեղը աղջկանս լաչար են ասում... մեզ ել՝ Ալեքսանը վատ տղա չի. տուն ել...

ԲԱՐՄ.—Եհ սանամեր, եկ բոլորը դուք խոսքեր են: Ալեքսանի վոսկին Աստղիկիդ փորը չի կշացնի: Դրանց ջուրը մեր արխովը չի անցնի, չե: (Դրսից լսվում են ձայներ՝ չա... Շա... Շա... լեկ այլն):

ՄԱՐ.—Նախիրն եկավ, եթամ կովս կթեմ. ես ա գալիս եմ (գլուխ ե):

ԲԱՐՄ.—(Մենակ) Դաշնակ ա գալիմ... ում համար ա գալու, ով արանց սպասում. թե մեր գեղականի համար ա գալի, շնորհակալ ենք, ախպեր, մի անգամ նրա շարբաթը խմել ենք... ել չեն կարա խափի: (Դրսից լսվում ե զուռնայի ձայնն) ես ի՞նչ խարար ա... ես հվաքեր են ես վախտ քեփ անում: (Ձայնն ուժեղանում ե): Ոհո. Ալեքսանի համքարն ա... մի ձեր ծնունդը չորտնա համ: (Գնում ե, մի առ ժամանակ բեմը մեռում է դաշտակ. ձայնը զնալով հեռանում է: Բեմը կամաց կամաց մբնում ե):

ՄԱՐ.—(Մտնելով) Ա քավիր... գնացել ա... հհ... (վառում ե լամպը) Ախ, աստված, դու վերջը բարի անես. դու հասնես մեզ, աստված ջան: Դու պահպանես մեզ, չտաս գաշնակների ձեռը. վոր եկել են, ի՞նչ ա ըլելու մեր որը. տղիս արինը խմեցին... ել մեզ սաղ չեն թողնի... (գնում ե):

### ՏԵՍԻԼ 2

ԿԻՐԱԿՈՍ, ԲԱՐՄԵԴ, լեկ ԱԼԵՔՍՈՆ

ԲԱՐ.—(Մտնելով) Ի՞նչ կարալինք անե... Տեսար, ի՞նչ թհար ստար քան-մստաքան գետնովը տվեց:

ԿԻՐ.—(Մտնելով) Եղ յսու մեր գլխին տվեց:

ԲԱՐՄ.—Տեղն եր:

ԿԻՐ.—ԱԼԵՔ.—(Միաժամանակ) Յա:

ԲԱՐՄ.—Յիս իմ հոգին, տեղն եր: Չե, ախպեր, յիս իմ արածին փոշմանել եմ:

ԿԻՐ.—Դե դու ել եղպես խոսացիր, պրծանք ելի:

ԲԱՐՄ.—(Մտնելով) Ի՞նչ թհար խոսամ... Միտս ա գալիս, յիս ջահել տղա ելի, մի շատ ել սիրուն, թառլան քիր ունեի, հերս զոռով տվալ մարդի, խեղճ աղջիկը մի տարի չապրեց, թաղեցինք:

## ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԲ Յուլինն է, ինչ առաջին գործողության ժամանակ

### ՏԵՍԻԼ 1

ՄԱՐԻԱՄ, ԲԱՐՍԵՎ.

ԲԱՐՄ.—Ելի դու քոնն ես ասում. բա են վախտը լավ եր, վոր մի զլավա Զալիբեկ, Մելիքանց Սեթո, սաղ գեղի հողերը դավթել ելին. Զե, յսու իմ ասուծ, վոր բալշեկիները դրուստ են. քո Աստղիկը են վախտը վոր չհամաձայնվեց մեղ հետ ու կուլակ Ալեքսանին վրնդեց, շատ լավ արավ:

ՄԱՐ.—Դրուստ ա, հմի ինձ ել են լավ հող տվել... ամա ասում են, վոր սրանք յերկար չեն մնա. հրեն, ասում են, ինգլիզը գալիս ա, դաշնակներն ել ձեռք ձեռքի տված...

ԲԱՐՄ.—Եղ բոլորը կիրակոսի, Ալեքսանի ու նրանց նմանների հերիաթն ա, բայց վոչ տեսանեն. Յերեկի քեզ ել վախեց բել են:

ՄԱՐ.—Ի՞նչ թագցնեմ, հա. դե քավոր Բարսեղ, դուն մի խելք սովորցրու... ի՞նչ ասեմ... թե ասեմ՝ լավ են անում, բալքի վատ են անում. թե ասեմ վատ են անում, բալքի լավ են անում... միտք եմ անում...

ԲԱՐՄ.—Ա՛ թե ահ են տվել, հա... մեկ պարզ ասա, այ կնիկ, տենամ ի՞նչ են ասել, վոր են գյորա խորհուրդ տամ:

ՄԱՐ.—Քավոր Բարսեղ, ի՞նչ ծածկեմ... յիս խոսք տվի կիրակոսին ու Ալեքսանին գործը հաջողացնեմ ու Աստղիկին...

ԲԱՐՄ.—Ի՛...

ՄԱՐ.—Հրեն սաղ գեղը աղջկանս լաշար են ասում... մեկ ել՝ Ալեքսանը վատ տղա չի. տուն ել...

ԲԱՐՄ.—Եհ սանամեր, եկ բոլորը դուր խոսքեր են. Ալեքսանի վոսկին Աստղիկիդ փորը չի կշացնի. Դրանց ջուրը մեր արխովը չի անցնի, չե: (Դրսից լսվում էն ձայներ՝ չտ... Շն... յել ալի):

ՄԱՐ.—Նախիրն եկավ, եթամ կովս կթեմ. ես ա գալիս եմ (զբում ե):

ԲԱՐՄ.—(Մենակ) Դաշնակ ա գալու... ում համար ա գալու, ով անրանց սպասում. թե մեր գեղականի համար ա գալի, շնորհակալ ենք, ախակը, մի անգամ նրա շարբաթը խմել ենք... ել չեն կարա խափի. (Դրսից լսվում է զուռնայի ձայնի) ես ի՞նչ խարար ա... ես մվեր են ես վախտ քեֆ անում: (Զայնն ուժեղանում ե): Ոհա. Ալեքսանի համքարն ա... մի ձեր ծնունդը չորտանա համ: (Գնում ե, մի առ ժամանկ բեմբ մենում է դատարկ. ձայնը գնալով հեռանում է: Բեմբ կամաց-կամաց մբնում ե):

ՄԱՐ.—(Մենելով) Ա քավոր... գնացել ա... հհ... (վառում ել յամպը) Ախ, աստված, դու վերջը բարի անես. դու հասնես մեղ, աստված ջան: Դու պահպանես մեղ, չտաս դաշնակների ձեռք. վոր եկել են, ի՞նչ ա ըլելու մեր որը. տղիս արինը խմեցին... ել մեղ սաղ չեն թողնի... (գնում ե):

### ՏԵՍԻԼ 2

ԿԻՐԱԿՈՍ, ԲԱՐՄԵՎ. յեկ ԱԼԵՔՍԱՆ

ԲԱՐ.—(Մենելով) Ի՞նչ կարայինք անե... Տեսար, ի՞նչ թհար ստար քան-մստաքան գետնովը տվեց:

ԿԻՐ.—(Մենելով) Եղ իսու մեր գլխին տվեց:

ԲԱՐՄ.—Տեղն եր:

ԿԻՐ.—ԱԼԵՔ.—(Միաձամանակ) Յա:

ԲԱՐՄ.—Յես իմ հոգին, տեղն եր: Զե, ախակը, յիս իմ արածին փոշմանել եմ:

ԿԻՐ.—Դե դու ել եղակս խոսացիր, պրծանք ելի:

ԲԱՐՄ.—(Մածկոս) Ի՞նչ թհար խոսամ... Միտս ա գալիս, յես ջահել տղա ելի, մի շատ ել սիրուն, թաղան քիր ունելի, հերս զոռով տվար մարդիկ, խեղճ աղջիկը մի տարի չապրեց, թաղեցինք:

Կիր.—Եղ աստծու կամքով և ելե:

ԲԱՐՄ.—Չե, նա իրա գլուխը սպանեց:

Կիր.—Կարելի յա՝ ճակատագիրն ակել: (Նայելով դռան) Ես Մարիամն ել ժեր մնաց, մի գար, խոսալինք վերջանար (դուրս):

ԲԱՐՄ.—(Ալեքսանդրին) Չի ըլլի, Ալեքսան, ձեռք քաշես եղ աղջկա: Նից, գնաս մի ուրիշի հետ բախտավոր ըլնս:

ԱԼԵՔ.—Ի՞նչ թհար ձեռք քաշեմ, քավոր Բարսեղ, իմ պատվին

մի ծածկիր:

ԲԱՐՄ.—Բա զոռով ել բան կըլի:

ԱԼԵՔ.—Տղամարդն ել են ա, վոր զոռով փախցնի, իրան կնիկ անի: Բա յես նրա մասխարեն ըլլմ, գեղականը ծիծաղա վրես... Չե, Բարսեղ ապի, հա Մըտով տղա Ալեքսանը մեռած չի:

ԲԱՐՄ.—Ախար, Ալեքսան ջան, հիմի աշխարհս փոխվել ա. հին որենքները չկան:

ԱԼԵՔ.—(Մեղմելով բուեցները, կատաղի) Հայ, յես եղ աշխարհ փոխողներին... Մի ասա փոխվել ա, ասա՝ փչացել ա, քանդվել ա: Դու գիտաս ըսենց ա մնալու:

ԲԱՐՄ.—Լավ, ի՞նչ կարաք անի:

ԱԼԵՔ.—(Ինքնավսահ) Ի՞նչ կարանք անի՞... Հըմ, վերջը կտեսա:

ԲԱՐՄ.—Ի՞նչ ասեմ, ախպեր, միաք կանեմ, միտք կանեմ, մեկ ել կուզեմ ձեր ասածներին հավատամ, համա դուք ել մի բան չեք:

### S E U H L 3

Նույնի, Կիրակոս յեվ ՄԱՐԻԱՄ

Կիր.—(Մարիամին դռնից) Խրատել ես, համոզել ես, չի ելե, իս չես կարա աղջկանդ պատիվը թողնե կոմսոմոլների ձեռքին, ես ել Ալեքսանը:

ՄԱՐ.—(Մրելով ձեռքերը) Բարով ես եկել, Ալեքսան:

ԱԼԵՔ.—(Խոնարհ բարեվում ե):

Կիր.—(Մարիամին) Ախար, քեզ համար եմ ասում, քո ոջախի, քո աղջկա պատվի համար եմ խոսում, թե չե՝ Ալեքսանի

համար ի՞նչ, չելավ քու աղջիկը, աշխարհս չկա աղջիկ...

ՄԱՐ.—Շնորհակալ եմ, փեսա կիրակոս. գիտեմ, դու ի՞նձ բարի լես կամեցել: Ախ, չգիտեմ ի՞նչ տնեմ:

Կիր.—Արա են, ի՞նչ վոր քեզ ասացի. ել մի ուշացնի. քանի հւա Ալեքսանի սիրտն ել տաք ա աղջկանդ վրա:

ՄԱՐ.—Ախ, քոռանա իմ բախտը:

Կիր.—Դարդ մի անի, հույս աստծու, ամեն ի՞նչ լավ կերթա: Դե հիմի ի՞նչ կասես, խնամի:

ՄԱՐ.—Ի՞նչ ասեմ, մնացել եմ շիվար, տեսնենք քավոր Բարսեղը ի՞նչ կասի: (Բարսեղին) Քավոր Բարսեղ, յես կասեմ դու գլխի յես կիրակոսը ի՞նչ կասի:

ԲԱՐՄ.—Գլխի յեմ, սանամեր:

ՄԱՐ.—Հիմի ի՞նչ կասես:

ԲԱՐՄ.—Ի՞նչ ասեմ... Յես ել եմ շիվար:

ՄԱՐ.—Բա վոր դու յել մի բան չես ասում, յես մի խեղճ, մոռգված կնիկ՝ ի՞նչ անեմ:

ԲԱՐՄ.—(Դաներ նառաչելով) Ախ, ելի են մեռած քրոջս պատկերը եկավ աչքիս առաջ: Եսպես գործի սապապ ըլողի հոգուն փրկություն չկա:

Կիր.—Դու յել բան ասիր, քավոր: 50 տարի առաջ մեռած քրոջդ սուզը հիմի յես տնհում... Աստծու կամքով եղած բանին ի՞նչ կարանք անի:

ԲԱՐՄ.—(Քիչ վրգովիած) Տո, ի՞նչ ասածու կամք ե... Բոնի մեկի բողազից կտրի, թե՝ աստված կամեցավ:

Կիր.—Դու յել հիմի մեր գլխին ելար իստակ կոմսոմոլ: Քիչ ա մնում ասես, թե աստված ել չկա, ճակատի գիրն ել սուտ բան ա: Լավ, դու մի ի՞նձ են ասա՝ ի՞նչ ա ելե ես տղին. (Ցույց տալով Ալեքսանին) պառավ մ, չոլախ ա: յես ի՞նչ գիտամ, խելքից պակաս ա, յա չե ի՞նչ մի զուսուր ունի: Թե Մարիամի փեսեն վոր ելավ, դովլմթը պտի զավթի:

ԲԱՐՄ.—Բան չասի, կիրակոս, Ալեքսանը փիս տղա չի: բա վոր աղջկա սրտով չի: ի՞նչ կարանք անի:

Կիր.—Կասա—աղջկա սրտով չի: —դու յել ըստի կասենաս խերի համար ըլես նստած: Բա եղ աղսախկալ մարդու ասելու խոսք ա... Բա թողնենք՝ եղ աղջիկը եթա ըլի աստված, ուրենք չունեցող կուսակցականների սիրական, մերն ել մնա անտեր: Բա ես խեղճ կնիկը (ցույց տալով Մարիամին) մի մարդ ել ա չունենա իրան պաշտպան:

ՔԱՐՄ.—Զեմ իմանում, ախպեր. յես ես գործի մեջ չեմ խառնվի,  
(վեր կենալով) հիմի դուք գիտեք ձեր բանը. Ամա սիրտու  
վկայում ա, զոր ես ձեր բռնած գործից լավ բան չի դուրս  
գալու. Դե, յես գնացի (դուրս):

ԿԻՐ.—Տեսար, խնամի Մարիամ, ես ել քու քավոր Բարսեղը, կա-  
սա—լավ բան չի դուրս գալու:

ԱԼԵՔ.—Բարսեղը վերջերս շատ ա փոխվել. քիչ կմաւ՝ եթա, ըլի  
կուսակցական:

ԿԻՐ.—Մի ջահել, խամ աղջկա թորգենք իրա խելքին՝ լավ բան  
ա դուրս գալու:

ՄԱՐ.—Փեսա կիրակոս, միտք կանեմ, միտք կանեմ, թե ես աղջ-

կաս ախրը ինչ ա ըլելու, քիչ ա մնում խելքս կորցնեմ:

ԿԻՐ.—Ի՞նչ պտի ըլի, քուչի աղջիկ. Ո՞վ ա իմանում, հա մի թո-  
կից փախած անառակ կուսակցականի հետ ել գնա անպսակ  
ապրի:

ՄԱՐ.—Զե, եղ բանը յես իմ պատվին չեմ ուտացնի. Ախ, ասու-  
ված, ինչ դարդ ու տանջանք ա աղջիկ ունենալը:

ԿԻՐ.—Շատ մի մտածի, խնամի Մարիամ, դու շատ բախտավոր  
կնիկ ես, վոր Ալեքսանի պես ազնիվ ճարդի յես պատահել,  
վոր իրա խոսքի տերն ա. ինչ ել վոր ըլի քո աղջիկը, նը-  
րան դարուլ ա: Դու իմ խոսքին մտիկ արա. քանի ուշ չի  
եղ ճամպից յատ պահի աղջկանդ, թե չէ մի անբախտու-  
թյուն եկավ աղջկանդ գլխին, են վախտ որ ու գիշեր դու  
յես տանջվելու:

ՄԱՐ.—Ախ, կիրակոս, յես հիմի յիլ շատ կտանջվիմ:

ԿԻՐ.—Մենք ել կուզենք քու տանջանքներին վերջ տանք: Ախար  
մեղք ես, խնամի. ամեն անգամ հսպես բախտավորություն  
չի գա քո դուրը: Դու ես գիշեր եղ բանը արա, գանք, աղջ-  
կանդ փախցնենք, մի գիշեր աղջիկդ մաս Ալեքսանի կուշտ,  
ել պրծավ: Ընդուց գենը իրար հետ շատ բախտավոր կտա-  
րեն:

ՄԱՐ.—Ախ, կիրակոս, եղ բանից շատ կվախենամ:

ԿԻՐ.—Մի վախենա, յես խամ չեմ. ել աղջիկ չեմ փախցրել. Ա-  
խար, խնամի, աղջիկը ձեռքք գնաց, կոմսոմոլները երեսի  
աբուրը սրբին տարան, բա եղ քո ոչախին վայել բան ա:

ՄԱՐ.—Լավ կխոսսաս, կիրակոս ջան, համա վախենամ, աղջկանս  
փախցնեք, ճամպին սիրտը ճաքի, յա չե գլխին մի փոր-  
ձանք բերի, են վախտ յես ի՞նչ ձուն տամ իմ գլխիս: Կա-

սեմ, հլա թող միքիչ ել մնա, ելի խրատեմ, ելի աղաչեմ,  
բալքի խելքի գա, խղճա իրա մորը: Մեկ ել՝ հիմի խրճիթի-  
վարիչ ա, 15 մանեթ ել փող կստանա, կասեմ՝ հլա մի վախտ  
թող փող հավաքի, շորեր անի...

ԿԻՐ.—(Կտրելով խոսքը) Ե, խնամի, բա քեզ պես հասկացող կնկա-  
վալել խոսք ա, վոր կանես... կասա՝ աղջիկս 15 մանեթ  
փող կաշխատի: Բա գեղական ջահել աղջկան վայել բան ա,  
եթա սաղ որը խրճիթ նստի, սրան-նրան գիրք տա, գե-  
ղականի համար գազեթ կարգա, տղերանց հետ խոսսա, ծի-  
ծաղա: Մարդ ել իրա աղջկա նամուսը 15 մանեթով ծախի...  
ինչ բան ա 15 մանեթը, ըհը, կուզես՝ Ալեքսանը քեզ 115  
մանեթ տա: (Ալեքսանին) Ի՞նչ կասես, Ալեքսան:

ԱԼԵՔ.—Ի՞նչ պտի ասեմ, իմ ունեցած-չունեցածս, ես ջանս ել  
վրեն սրանց փեշքաշ:

ԿԻՐ.—Զան, Ալեքսան. (Մարիամին) բա մի ուրիշ մարդ եղ խոսքը.  
կասեր... Գովել թող չըլի, ինչքան տսես, լավ տղա յե Ա-  
լեքսանը:

ԱԼԵՔ.—(Գրավնից հանելով բղբադրամեներ):

ԿԻՐ.—Հլա մի ինձ տուր:

ԱԼԵՔ.—(Հատ-հատ տալով չերպինեցները կիրակոսին) Դե, զի կալ-  
դուղ հարկուր մանեթ:

ՄԱՐ.—(Հրամարվելով) Բա, եղ ի՞նչ ա կանեք:

ԿԻՐ.—Դու հլա մի ես 10-ը շխչիալի չերվոնները վե կալ:

ՄԱՐ.—(Հրամարվում ե առանց նայելով փողերին):

ԱԼԵՔ.—Վե կալ Մարիամ մարդիկ. չիմանաս զալան եմ տալիս:  
կուզենաս, աղջիկդ ել քեզ մնա, եղ փողերն ել՝ 15 մանեթի-  
թամահը մի ըլի, աղջկանդ նամուսին ամոթ ա:

ԿԻՐ.—Զան, Ալեքսան, տղամարդ ա, յես իմ հոգին: Վե կալ-  
խնամի, ելի մեղպեսները ձեզի խղճան: Ե, առածը ասում  
ա՝ ջուրը կեթա, ավազը կմնա: Հիմի վոր ես լակոտ-լու-  
կուտները մեջ են ընկել, ձեզի մի քանի կապեկի լավու-  
թյուն կանեն, ձեր աչքը կկապեն, ընենց եք իմանում՝ ձեզ  
մնալու... Միամիտ ես, խնամի, միամիտ, հլա չես իմա-  
նում ես կառավարության ֆանգերը:

ԱԼԵՔ.—Երանք թոխլին կշաղացնեն, վոր հետո մորթեն:

ԿԻՐ.—Դրուստ ա: Տեսան միքիչ դովլաթդ մեծացափ, կկանգնեն  
գլխիդ, զի տուր, ես փոկինն ա, ես ընկերությանն ա, ես  
թովջին ա, տուր հա տուր, հոգիդ ել դուրս գա, տուր:

ՄԱՐ.—Դորդ, Կիրակոս, չըլի՞ կովս տանես,  
ԿԻՐ.—Կով կասա... Կովդ ել պտի տանեն, տունդ ել պտի սրբեն  
տանեն, շորերդ ել վրայիցդ պտի հանեն, ճա աղջկանդ ել...  
(Փափում ե ականջին):

ՄԱՐ.—Վուլ, Կիրակոս, եղ ի՞նչ ա կասես:

ԿԻՐ.—Բա ի՞նչ զիտաս, խնամի... Սրանք որե՞նք ունին... Բա  
սրանց կշտին զակի՞ն կա... Են մարդիկ, վոր աստծուն ու-  
րանան, սուրբ աստվածածնի պատկերը վառեն, ժամեր  
քանդեն, ել են մարդիկ խիղճ կարան ունենա...

ԱԼԵՔ.—Դե, են ա մարդիկ ափաշկարա ասում են՝ մենք անաստ-  
գած ենք:

ՄԱՐ.—ՈՓ (ձաներ հառաջում ե):

ԿԻՐ.—Լավ, տունը մերը, խոսքը մերը. (նայելով Շուրջը) դու յել  
եսոր մեր մարդն ես: Քու են ողորմած հոգի տղեն ել ես  
բայլշեկների խելքով եր ընկած, ի՞նչ ելավ... Դաշնակները  
սպանին, ձեր ունեցած-չունեցածը փչացավ, դու յել մնացիր  
եսպես անտեր, վիզդ ծուռ. (խորհրդավոր կրկին նայելով  
Շուրջը) բա վոր հիմի յել գաշնակները եկան, քու աղջիկը  
նրանց ձեռքից ի՞նչ թհար ա խլսելու:

ՄԱՐ.—(Սարսափած) Վուլ, աման, Կիրակոս, եղ ի՞նչ ա կասես...

ԿԻՐ.—Բա դու զիտաս ես թալանչիներին դիվան չի ըլելու...  
բա սա իրանց ա մնալու...

ՄԱՐ.—(Նոյն սարսափով) Աման, Կիրակոս, զորդ, գաշնակը գա-  
լու յա...

ԿԻՐ.—Բա չի գալու... Լավ, ասենք մենք դիվան չունենք ես  
լրբերին, բա աստված դիվան չի անելու:

ՄԱՐ.—Ախ, Կիրակոս, ես ի՞նչ իմացա:

ԿԻՐ.—Լավ, մի վախենա: Հիմի վոր Ալեքսանն ել փեսեղ ելավ,  
ել քեզ բան չի ըլի: Հիմի դու քու աղջկա ճարը տես, թե  
չե եկել են, կղարկեն իր ախպոր կուշա:

ՄԱՐ.—Վուլ աման:

ԿԻՐ.—Մի վախենա: Ինչ վոր քեզ ասի, ենպես ել կանես: Աստ-  
դիկի տեղաշորը ըստի կսարքես, դու յել կեթաս թոնրա-  
տուն, ճրագն ել ակոշին կդնես, եղ կըլի մեր նշանը. իմա-  
ցար, խնամի:

ՄԱՐ.—(Վախենած) Վախենամ աղջիկս մեռնի:

ԿԻՐ.—Արխելին մնա: ըսկի բան ել չի ըլի: Հիմի ուր ա, ուր չի,  
ի՞նքն ել կգտ: Մենք եթանք, Ալեքսան: (Մարիամի բոլոր-

վին անուշադիր, Կիրակոսը փողերը նիսում ե Մարիամի ու-  
րի յերկու կոնակների արանք, այնպես վոր բղբի ծայրը յերե-  
գում ե):

ԿԻՐ.—Բան ե՝ թե քիզ հարցուփորձ արին, կասես իրա հոժար  
կամքով ա գնացել: Զեն ու ձուն ել վոր քցեց, դուրս չգաս:

ՄԱՐ.—(Խիստ վախեցած, լացակումած ձայնով) Վուլ, աման, Կի-  
րակոս, յես եղ բանը չեմ կարա սուտ  
խոսի: Աղջիկս ինձ կանիծի: Աղաշանք կանեմ, Կիրակոս  
ջան, եղ բանը մի անի, շատ յերկուղ կանեմ:

ԿԻՐ.—(Խիստ) Դե, բոլ ա, խնամի, յերկես չես (գնում են):

ՄԱՐ.—(Սղորում ե) Դու մեզ խլսա գաշնակների ձեռից, ասո-  
ված ջան, սով զրկա, կարկուտ զրկա, ցավ զրկա, թաքիլա  
դաշնակներին չզարկես: Ուազի յենք, թող մեր ջահել-ջիվա-  
նը գնազկոմսոմոլ զրվի, ժամի, աստծու չհավա... Վայ, լի-  
զուս պապանձվե, ես ի՞նչ ասի:

## ՏԵՍԻԼ 4

ՄԱՐԻԱՄ, ԲԱՐՅԵԴ.

ԲԱՐՅ.—(Դունից) Գնացի՞ս:

ՄԱՐ.—Գնացին. քավոր Բարսեղ, դու յել ի՞նչի՞ թողիր գնացիլ.  
կտենաս՝ յես մի մոլորգած կնիկ, մնացել եմ շիվար: Հիմի

ինձ մի խելք սովորացրու. սանիկիդ ես գիշեր տանում ես:  
ԲԱՐՅ.—(Ծանր մատանջուրյամբ) Ի՞նչ ասեմ, սանամեր: Յես ել

եմ մնացել շիվար: Մի մարդ ել հարկավոր ա ինձի խելք  
սովորացնի. (ուսերը վեր բաշելով) չեմ իմանում՝ ի՞նչ ա-  
սեմ: Թե ասեմ՝ լավ են անում, բալքի վատ ելավ. ասեմ՝  
վատ են անում, բալքի լավ ելավ: Միտք կանեմ, միտք կա-  
նեմ, լավ ա ես գործի մեջ չխառնվեմ, հոգիս ել կրակը  
չքցեմ:

ՄԱՐ.—Դու յել վոր զրադ ես կանգնում, յես խստակ խելքս կորց-  
նում եմ: Մեկ միտք կանեմ՝ չտամ աղջկանս, բա վոր դաշ-  
նակներն ել եկան տեսան աղջիկս կուսակցականների ճամ-  
բուկ ա գնում, ստղ չեն թողնի, գիտեմ:

ԲԱՐՅ.—Ի՞նչ վախտա գալու:

ՄԱՐ.—Ի՞նչ իմանամ:

ԲԱՐՄ.—(Քրի տակ ծիծաղելով) Հըմ, եղ Կիրակոսը յա չե Ալեք-  
սանը ասած կը լին:

ՄԱՀ.—Թեղանից ինչ պահեմ, նրանք ասին:

ԲԱՐՄ.—Ինձ ել են տսել, ամա արխելին մնաւ Դաշնակ, մաշնակ  
ել չկա: Դաշնակների բանը վերջացել պրծել ա:

## ՏԵՍԻԼ 5

Նույնե, ԱՍՏԳԻԿ յել ՄԻՍԱԿ

ԱՍՏ.—(Մտնում է տաս ուրախ ու զվարք տամադրությամբ, կա-  
պոցը ձեռին, երա յետվից Միսակը: Աստղիկի անակնալ յեվ  
բափով ներս գալուց ուժեղ ցնցվում են Մարիամն ու Բար-  
սեղը: Աստղիկը տապ կապոցը սեղանի վրա դնելով մոտենում  
է Մարիամին) Մայրիկ ջան, եսոր քեզ շատ, շատ եմ կարո-  
սել (գրկում ե մորը): Բարե, քավոր Բարսեղ:

ԲԱՐՄ.—Բարին արևուդ, Աստղիկ ջան:

ՄԱՐ.—(Միսակի ներկայությունից միիքի տամադրությունը բարձրա-  
նում է) Բարով ես եկեց Միսակ ջան, նստիր:

ԲԱՐՄ.—Աստղիկ ջան, ես սաղ որը ժողովք, ժողովք, չբեզա-  
րեցի՞ր:

ԱՍՏ.—Դրուստ վոր շատ բեզարել եմ: Հոգիներս դուրս եկավ,  
մինչև վոր կարացինք ես մեր գեղական կանանց մի բան  
հասկացնել:

ԲԱՐՄ.—Եղ ինչ ելիք հասկացնում:

ԱՍՏ.—Եկել եր մեր կին հրահանգչուհին, ցանկանում ե մեր  
գուղում թաշնաբուծական մի արտել կազմակերպել:

ԲԱՐՄ.—Ե, գործը զլուխ բերի՞ք:

ԱՍՏ.—Բերինք: Տես, վարկալին ընկերությունը տալիս ե 800 ս.  
փող և 2 մեծ ինկուբատորներ:

ԲԱՐՄ.—Եղ, ինկու... ինկու... եղ ի՞նչ բան ա, Աստղիկ:

ԱՍՏ.—Եղ մի մաշինա յա, քավոր Բարսեղ:

ԲԱՐՄ.—Մաշինա:

ԱՍՏ.—Հա, ինչպես բացատրեմ: Ալ, որինակ, (աշեր ման ե ա-  
ծում սենյակաւմ՝ ցանկանալով գտնել համեմատելու մի բան)  
հսպես, ելի, վերջապես մաշինա յի: Այնտեղ դարսում են  
150—200 ձու, իրա ժամանակին մեկ ել տեսար թըփ, թըփ,  
թըփ, ծի, ծի, ծի, ծի, ծուաերը դուրս եկան:

ԲԱՐՄ.—(Զարմացած, նիացած) Եղ ինչ թհար մաշինա յա, Աստ-  
ղիկ ջան, վոր միջից ճուտեր են դուրս գալու:

ԱՍՏ.—Ել, բացատրեմ:

ՄԻՄ.—Թող, Աստղիկ, յիս բացատրեմ:

ԱՍՏ.—Դի լավ, զու բացատրիր:

ՄԻՄ.—(Կատակելով) Ինչ թհար Աստղիկը ասաց՝ մաշինի մեջ  
ձգեր են դարսում, վըեն որհնած ջուր շաղ տալիս, տերտերն  
ել մի գլուխ ավետարան ա կարդում, մեկ ել տեսար՝ աստծու  
զորությամբ, (ձեռները ամբարձելով) մեռնամ նրա սուրբ զո-  
րության՝ ձտերը դուրս եկան:

ԲԱՐՄ.—Դե բոլ ա մարդի ձեռք առնեք, Ե... Հիմի եղ սրբերին  
ել... (բարձրացնում է ձեռիքը, ցանկանում է մի բան ասել):

ԱՍՏ.—Դե, զե, զե:

ՄԻՄ.—Դի, լալլա, քավոր Բարսեղ, հը...

ԲԱՐՄ.—Միղա քե աստված:

ԱՍՏ.—(Միսակի նետ ուրախ ծիծաղելով) Վու, փուստ անցավ:

ՄԻՄ.—Չե, քավոր, վերջիվերջո կտենամ՝ դու մեր ճամբով ես  
դալու:

ԲԱՐՄ.—Ճո, եկել պրծել եմ, դուք ձեր բանին կացեք:

ԱՍՏ.—(Մարիամին) Մայրիկ ջան, զու եղ ինչ եղպես քիթդ կտ-  
իսի նստել ես: (Հանկարծ հիւելով) Հա, մայրիկ, հիմի յիս  
քեզ կուրախացնամ: (Բաց ե անում կապոցը) Քեզ ել, քա-  
վոր Բարսեղ: (Գուրա ե բերամ կապոցից մեկ-մեկ) Ես շա-  
քար, ես չիր, ես սապոն, (ինք իրեն) ես հլա թող մնա:  
ես չալ, կոճակ, թիր. (Վերցնելով մի կապոց՝ մոտենում և  
Մարիամին) թե իմանաս՝ ըստի ինչ կա:

ՄԱՐ.—(Անտարբեր դեպի կտպոցը նայում է Աստղիկի յերեսին,  
ծանր հառաջում) Ա՛խ:

ԱՍՏ.—Չիմացար, մայրիկ, ըստի վոչ ախ կա, վոչ ոփ՝ (բաց ե  
անում փարաքանը) տես, քեզ մի լավ զեյրացու յիմ բերել:

ՄԱՐ.—(Նարաւնակում է անտարբեր մնալ):

ԲԱՐՄ.—(Վերցնելով տեսլում է կտորը) Շատ պատվական կտոր ա:

ԱՍՏ.—Հա, մայրիկ ջան, եսոր Փոկ-ի պարտքն ել տվի պրծա:

ԲԱՐՄ.—Ապրիս, աղջիկ ջան: (Մարիամին) Ել ինչ դարդ ունիս.  
սանամեր, տղի պես աղջիկ ունիս. պարտքերդ ել ա տալիս,

քեզ ել շոր ա անում:

ԱՍՏ.—(Անմիջապես) Երա քավորին ել չե մոռանում. (Տալով  
Բարսեղին ել մի փոերիկ կապոց) Ես ել քեզ:

**ԲԱՐՄ.**—(Բուց անելով) ես թութուն ա, պերվի սորթ, վայ ապրիս,  
 տղիկ ջան, ես ինչ նեղություն ես քաշել ինձ համար:  
**ԱՍՏ.**—(Կես կատակով, կես հանդիմանական) Յես քեզ համար նե-  
 ղություն եմ քաշում, քավոր բարսեղ, վոր մեկ ել դու ինձ  
 մարդու տալու համար գլխացավանք չքաշես:  
**ԲԱՐՄ.**—(Կողմբ) Լավ կծեց, ամա տեղն ա քեղ, բարսեղ:  
**ԱՍՏ.**—(Մարդամին) Ֆե մի բաց արա աչքերդ, մայրիկ ջան, նըս-  
 տել ենպես ախ ու վախ ես անում—կասենաս վոչխաներդ  
 են սարումը կոտորվել:  
**ԲԱՐՄ.**—Դարդ անողին՝ դարդ կըլի:  
**ՄԻՒ.**—Քեփ անողին ել քեփ կըլի:  
**ԱՍՏ.**—Միսակն ու Աստղիկն ել վոր շատ քաղցած էն՝ ուտելու  
 բան պտի ըլլի, Մայրիկ ինչ կա ուտելու:  
**ՄԱՐ.**—Կաթ եմ դրել տաքանա, Գնա բեր, մի ստաքան ել  
 քավորը խմի:  
**ԱՍՏ.**—(Գնում ե քոնրատուն):  
**ՄԱՐ.**—Դու ինչպես ես, Միսակ ջան, լավ ես:  
**ՄԻՒ.**—Շնորհակալ եմ, մայրիկ:  
**ԱՍՏ.**—(Գրաց) Միսակ, Միսակ, մի սպիտիկա բեր, վառիր, մութ  
 ե, բան չեմ տեսնում:  
**ՄԻՒ.**—(Գնում ե):  
**ՄԱՐ.**—(Բարսեղին) Այ քավոր, մի բան ասա, մնացել եմ յերկու  
 կրակի մեջ, քիչ ա մնում խելքս կորցնեմ:  
**ԲԱՐՄ.**—Այ սանամեր, մոռացիր...  
**ՄԱՐ.**—Ախ, քավոր, յես կուզեմ ձեռք քաշեմ, յես կուզեմ չտամ,  
 բա մեզ ել վոր դուշման ընկան... Ենոր Զանոյեսց Սաթոն  
 կասա զգուշ կաց, աղջկանդ գլխին սկ պսակ չգա—ընը, յես  
 ել անձար մի կնիկ, տունս մի տղամարդ ելա չկա, բա վոր  
 գեշերով ել գան ու մեզ մի վեստ տմն:  
**ԲԱՐՄ.**—Դու յել եղքան մի վախենա, սանամեր:  
**ՄԱՐ.**—Ի՞նչ թհար չվախենավ, քավոր, դու լավ գիտես եղ Մըր-  
 տուենց դասը ինչ գաղան խալխ ա: Բանն ել վոր հակառա-  
 կություն հասավ, յես ինչ կարամ անե:  
**ԲԱՐՄ.**—Լավ, ելի մենք խոսքը քցենք. ուազի չի, յես Աստղիկին  
 ես գիշեր կտանեմ մեր տուն:  
**ՄԱՐ.**—Բա վոր իմացան ու քեղ ել դուշման ընկան:  
**ԲԱՐՄ.**—Թող սանիկիս զլիսին մի փորձանք չգա. թե ինձ ել  
 դուշման ընկան՝ յես իմ որը ապրել պլճել եմ, կեղծ գու-

վասանք չըլի, սանամեր, շատ, շատ լավ աղջիկ ունես. վեր-  
 ջերս շատ ե մտել աչքս: Հիմի կտենամ, են, ինչ վոր կա-  
 սեին կոմսոմուների մասին, դրուստ չի:  
**ՄԱՐ.**—Ե, լավ աղջիկն ել դարդ ու ցավ ա: Ինչ լավ կըլեր աղ-  
 ջիկս մի երկու ամսով եթար ուրիշ տեղ: (Աստղիկ, Միսակ  
 ներս են մենում ձեռներին պնակներ, ամանով կար, բաժակ-  
 ներ յիվ այլն):  
**ՄԱՐ.**—Եկան: Աստղմած, սատված, դու վերջը բարի անես:  
**ԱՍՏ.**—Համեցեք, քավոր բարսեղ: Նստիր, Միսակ:  
**ԲԱՐՄ.**—Շնորհակալ եմ, անուշ արեք, յես քո բերած թութունից  
 մի չիրուխ քաշեմ: (Պատրաստում ե):  
**ՄԱՐ.**—Մոտկացիր, մի ստաքան կաթ խմի, հազի լավ ա: (Աս-  
 ղիկը մատուցանում ե Բարսեղին բաժակով կար: Միսակ, Աս-  
 ղիկ ուտում են ախորժակով):  
**ԲԱՐՄ.**—Ե, Աստղիկ, են մաշինի բանը չասիր, ի՞նչ թհար են ձու-  
 տերը դուրս գալու:  
**ԱՍՏ.**—Քավոր ջան, լավ կըլի, եգուց քավորկնկա հետ գաս խըր-  
 ճիթ, ենտեղ մաշինն ել կտեսնես, ամեն ինչ ել տեղովին  
 կհասկանաս:  
**ԲԱՐՄ.**—Եդ ել զրուստ ես ասում:  
**ՄԻՒ.**—(Վերջացնելով ուտելլ) Շնորհակալություն, յես գնամ:  
**ՄԱՐ.**—Մի գնա, Միսակ ջան: Իլա շուտ ա, նստի, կիսուանք:  
**ԱՍՏ.**—(Սյոյ ժամանակ զարմացած, բայց ներխուս ուրախ նայում  
 ե Մարդամին, վոր սիրալիր խնդրում ե Միսակին մեալ: Տեղա-  
 փորելով Մարդամի կողքին): Ասում ես՝ նստիր, կիսուանք,  
 ինքդ բերանդ ջուր առել նստել ես: Դե մի ես խաչած ձհո-  
 բերդ ել ցած բեր: Կասենաս Մարիամ սատվածածին ըլիս.  
 (Քառում ե մոր ձեռները ցած, հանկարծ նկատում ե կոնսկների  
 արտեխում բղբարամեներ: Դուրս ե բերում) ես ի՞նչ փող ե...  
**ՄԱՐ.**—(Խիս սփորփում ե, այլայլում):  
**ԲԱՐՄ.**—(Գուշակում ե ինչ փող լինելլ):  
**ԱՍՏ.**—(Զննում ե փողերը: Միսակը նմանապես հետաքրքրվում ե):  
**ՄԱՐ.**—(Բարսեղի ականջին զադենի ասում ե, թե ինչ փողեր են):  
**ԱՍՏ.**—Մայրիկ, ես ի՞նչ փողեր են:  
**ՄԱՐ.**—(Կարկամում ե):  
**ԲԱՐՄ.**—Եսոր վոր ճամբին գտել ելիր, ես են փողը չի, սանամեր:  
**ՄԱՐ.**—Հա, դրուստ. ճամբին ընկած եր, վեր կալա:  
**ՄԻՒ.**—Դուզ հարյուր մանեթ ե, ես ով կորցրած կլինի:

ԱՍՏ.—Բա մայրիկ, ինչու չտարար նախագահ Արամայիսի մոտ։  
ՄԱՐ.—(Կարկամում ե):

ՄԻՒ.—Յես կասեմ՝ հենց ինքը Արամայիսն ել կորցրած կլինիւնրա մոտ պետական փողեր կան։

ԱՍՏ.—(Միավիին) Լավ կըլի հենց հիմի յել ես փողերը տանես նրան տաս։

ԲԱՐՄ.—Լավ, հա թող մնա, զռազ չի Բալքի Արամայիսը չեկորցրել ու Ալեքսանի նման հարուստ մարդ ա կորցրել ինչի՞ յենք տալիս։

ԱՍՏ.—(Չդայնացած) Քավոր, ելի դու ինձ մոտ եղ զզելի մարդու անունը տվի՞ր։

ՄԱՐ.—Աստղիկ ջան, ինչի՞ յես եղ մարդի անունից եղակես խըրտնում, ինչ ա արել քեզ։

ԱՍՏ.—Զեմ ուզում, չեմ ուզում նրա անունը լսել, Ուրիշ բանի մասին խոսեցեք։

ՄԱՐ.—Բա զոր մի որ են քեզ զուռզ փախցնի։

ԱՍՏ.—(Հեգնական) Փախցնի... Զե, մայրիկ, արխելին մնա, ևն մեր ալաբաշ՝ շան թուլեն չի կարա փախցնի։

ՄԱՐ.—Եղակես մեծ-մեծ մի խոսա, Աստղիկ, բանը դոր հակառակության հասավ, դու գիտես եղ Մրտուենց դասը ինչ գաղան խալիս են։

ՄԻՄ.—(Մարիամին) Դուք ել ինչ եք եղքան վախենում, մայրիկ անտերի յերկի՞ր ա, ինչ ա, թող նրանք համարձակվեն Աստղիկի մազին ձեռք տալ, կամ ձեզ մի վատություն անել, տես յիս նրանց գլխին ինչ ուին բերեմ։ Միամիտ, խեղճ կնիկ են դաել, ով ա իմանում դալիս ահ են տալիս։

ԱՍՏ.—(Փաղաքաբար) Մայրիկ ջան, չի ըլի ձեռք քաշես եղ գործից ու սրասից հետո վոչ խոսիս, վոչ ել իմանաս։

ՄԻՄ.—Դորդ, Աստղիկ, «Խորհրդագլին Հայաստանում» կարգացի՞ր ինչպիս մի թուրք աղջկա յեն փախցրել։

ԱՍՏ.—Կարգացի, և ինչ խալտառակ գործ եւ Աղջկա մայրը փոդ ե վերցնում և իրա համաձայնությունը տալիս, վոր գան աղջկան տանեն։

ՄԻՄ.—Կարծեմ հիմի կիսամեռ դրության մեջ եւ Հիմի մորն ել են բռնել, բանտարկել, փախցնողներին ել, և մորը ավելի ծանր պատիժ են վճռել։

ՄԱՐ.—(Սլյայլում ե, անհանգիս օտքումներ անում):

ԱՍՏ.—Տեղն ե, այդպիսի լիրը կանանց... Ոհ, ինչ տեսակ զզելի

մայրեր կան աշխարհիս յերեսին, վոր համաձայնվում են իւրանց աղջկան փողով ծախեն։ (Զայրացած) Թու...»

ՄԱՐ.—(Հանկարծ նշում ե, ուշարափ ընկերում Բարսեղի ուսին Ասդիկի, Միստի անմիջապես վրա յին հասնում)։

ԱՍՏ.—(Վախեցած) Մայրիկ, ինչ պատահեց (վերցնում ե Բարսեղի ուսից, գրկում): Մայրիկ... Միստի, ջուր, Միստի բերում ե ջուրը, Ասդիկը ձեռքով է մակատին) Մայրիկ, մաշքի յեկ։

ԲԱՐՄ.—(Անհանգիս նպնապացնում ե բերանը, աշխատում ե մի բանով ոգնել):

ԱՍՏ.—Մայրիկ... մայրիկ (տեսնելով, վոր ուսիր չի գալիս, վախեցած ձայնով) Միստի, քավոր, մի բան արեք, յես վախենում եմ։

ՄԻՄ.—Մի վախենաւ (Բարսեղին) ես ինչի՞ մեկից եսպես ելավ։

ԲԱՐՄ.—Ախ, ինչ ասեմ։

ԱՍՏ.—(Կամաց-կամաց ուսիր զալով) Ախ, Աստղիկ ջան, աղիկ բալա (լայ և լինում)։

ԱՍՏ.—Ինչ պատահեց քեզ, մայրիկ, դու լաց ես ըլում... իմ խեղճ տանջլած մայրիկ։

ՄԱՐ.—Ախ, անիծվի քո մերը։

ԱՍՏ.—Մայրիկ, ինչեր ես խոսում... (Բարսեղին) Քավոր, դու կիմանաս, ինչ ա պատահել մայրիկին։

ԲԱՐՄ.—Բան չկա, աղիկ ջան։ Արի կըլի գնանք, դու ես գիշեր մեր տանը քնի։

ԱՍՏ.—Զեր տանը... ինչի՞...»

ՄԱՐ.—Գնա, գնա, բալա ջան։ Ախ, գժոխքի փաւ ըլի քո մերը (Ասդիկ, Միստի ատակուսած նայում են միմյանց)։

ՄԻՄ.—(Ասդիկին) Յես մեռնեմ, թե եստեղ քո գլխին մի քաւ չկա։

ԱՍՏ.—(Բարսեղին) Եստեղ մի բան կա, ինձանից թազցնում եք (Մարիամին) Մայրիկ, վերջապես կասիս, թե չե յիս խելքս կորցնում եմ։

ՄԱՐ.—(Լացակումծ ձայնով) Ինչ ասեմ, աղջկիս, քո մերն ել են թուրք կնիկն ա, քո մերն ել համաձայնվել, փող ավեկալել, վոր քեզ ես գիշեր փախցնեն (լալիս ե)։

ԱՍՏ.—(Մի վայրկան բարացած) Դժւ... Ուրեմն ես փողերը... Մայրիկ, մայրիկ (նեկեկում ե, լինում մոր ծնկներին)։

ՄԻՄ.—Փախցնեն... ես գիշեր։

**ՄԱՐ.** — Մեղավոր եմ քո առաջ, Աստղիկ ջան, ախ, յես խոսք չելի-  
տալիս, հակառակ ելի, ամա ենքան խոսացին, ահ տվին,  
ասին՝ դաշնակն ա գալու, կսպանի աղջկանդ. եղ փողերն ել  
չիմացա՝ թնչ թհար ճխտին շորերիս արանք: (Գրկելով Աս-  
դիկին) Չե, յես քեզ չեմ տա, թող ինձ ես շեմքի առաջ  
սպանեն... (Բաղխում են դրսի դուռը. հաջում ե ուներ, ընդ-  
հանուր իրաւանցում):

**ՄԻՍ.** — Ես ա, եկան (հանում ե ատրեանակը):

**ՄԱՐ.** — Աման, Միսակ ջան, դու մի՛ գնա:

**ԲԱՐՄ.** — (Նույնակես միջամտում ե, ուզում ե ինձը զնալ) Թող, Մի-  
սակ, յես նրանց ջուղաբը կտամ:

**ՄԻՍ.** — (Մոտենում ե դռանի, դրսից լսում ե Արամայիսի ձայնը՝  
ընկեր Աստղիկ): Ես մեր նախագահ Արամայիսն ե:

**ԱՐԱՐ.** — (Բաց ե անում դուռը):

## ՏԵՍԻԼ 6

Նույնի յեվ Ա.ՐԱՄԱՅԻՍԻ

**ԱՐԱՐ.** — (Մտնում ե շատ ուրախ տրամադրությամբ) Բարե՛ ձեզ՝  
(առանձնապես Յատղիկին) բարե, Աստղիկ, քեփ արա, քեփ  
(ձեռքով խփում ե ուսին):

**Ա.Ս.** — (Աշխատում ե բազգնել ներին հուզմունքը):

**ԲԱՐՄ.** — (Մարիտին) Ես ի՞նչ լավ բան ելավ, ել մի վախենա:

**ԱՐԱՐ.** — (Մոտենալով Մարիտին՝ մտերմորեն նսում ե նրան

շատ մոտ) Բարե, Մարիամ քուրիկ:

**ՄԱՐ.** — Բարին արևոտ, Արամայիս ջան:

**ԱՐԱՐ.** — Ելի ի՞նչ ե, տիսուր-տրտում կանգնել ես:

**ՄԱՐ.** — Ի՞նչ անեմ:

**ԱՐԱՐ.** — Քեփ արա, ուրախացիր, աշխարհի աչքը հանի:

**ՄԱՐ.** — (Հառաչելով) Ե, մեղպեսների համար աշխարհումս ուրա-  
խություն չկա:

**ԱՐԱՐ.** — Ի՞նչի ե,

**ՄԱՐ.** — Յես զոր հալա չտեսա:

**ԱՐԱՐ.** — Հիմի կտեսնես: Դե, Մարիամ քուրիկ, աչքդ լույս, ե-  
կել եմ ձեզ ուրախացնեմ: Հիմի աշխարհիս ուրախությունը  
մեղպեսների համար ե:

**ՄԱՐ.** — Աստված ել թող քեզ ուրախացնի, Արամայիս ջան, թե  
իմ դուռը ուրախություն ես բերել:

**ԱՐԱՐ.** — Ամենամեծ ուրախություն եմ բերել ձեզ համար: Հիմի  
դրանից ավելի յերեկելի բան չկա:

**ԲԱՐՄ.** — Ապրես, Արամայիս ջան, ելի դու մեղպեսներին ուրա-  
խացնես: (Մարիտին) Տենաս ինչ բան ա...

**ՄԻՍ.** — Դե, մի ասա եղ ուրախալի լուրը, իմանանք:

**ԱՐԱՐ.** — Ասեմ: (Մարիտին) Մարիամ քուրիկ, եկել ենք աղը-  
կանդ փախցնենք:

**ՄԱՐ.** — (Յեցվում ե, ժփորվում):

**ԱՐԱՐ.** — Հը, ինչի վախեցար. նրան մի շատ յերեկելի տեղ ենք  
փախցնում, վոր սաղ գյուղական աղջկները կարող են նա-  
խանձել: (Բարսեղ, Միսակ տարակուսած նայում են իրաց  
յերեսին):

**ՄԱՐ.** — Ի՞նչ ասեմ, Արամայիս ջան, դու նրա միծ յեղբայրն ես,  
եղ ել քո իրավունքն ա:

**ԱՐԱՐ.** — Յանի սրտանց ես ասում, Մարիամ քուրիկ, հավատամ:

**ՄԱՐ.** — Հավատա, Արամայիս ջան, սրտանց եմ ասում, սրտանց:

**ԱՐԱՐ.** — Ես թղթումն ա գրված՝ Աստղիկին ուր ենք փախցնում:  
Առ, Աստղիկ, դու յել կարդա:

**Ա.Ս.** — (Խիս կասկածով, տարակուսած, վերցնում ե բուղբը: Մի-  
առի նույնակես խիս նետարերվալում ե: Մարիամ, Բարսեղ  
նույնակես իրանց ուռադրությունը խիս լարում են, շնչեր պա-  
հած: Կարդում ե) Բաղվածք № 87 արձանագրության:

**ԱՐԱՐ.** — (Ընդհատելով) Եղ թող, Աստղիկ:

**Ա.Ս.** — (Հարունակում ե) Համաձայն գավառալիին կոմիտեիի № 186  
շրջաբերականի...

**ԱՐԱՐ.** — Եղ ել թող, դու վորոշումը կարգա, վորոշումը:

**Ա.Ս.** — (Հարունակում ե) Վորոշվեց Յերեանի շրջ աստիճանի  
կուսդպրոց ուղարկել ընկ. Աստղիկ Ավետիսյանին, տալով  
նրան ճանապարհածախս և որապահիկ:

**ՄԻՍ.** — Ուռած...

**ԲԱՐՄ.** — Տղեք ջան, յես ել ձեզ հետ՝ ուռած...

**ԱՐԱՐ.** — Մի սահաթ առաջ ստացվեց փոստը. չկարողացա համ-  
բերել, յեկա ձեզ ուրախացնելու:

**Ա.Ս.** — (Արամայիսին, զերմագին բռնելով ձեռքը) Զգիտեմ ինչպես  
հայտնեմ իմ շնորհակալությունը...

**ԱՐԱՐ.** — Թող քո շնորհակալությունը լինի, յերբ կավարտես ու-  
սումդ, կգաս մեր գյուղը աշխատելու:

ՄԱՐ.—(Բոլոր ժամանակ ապշած նայում ե սրա-նրա յերեսին) Քա-  
զոր, ես ի՞նչ կարդաց Աստղիկը, յես գլխի չեմ ընկնում:  
ԲԱՐԾ.—Սանամեր, աչքը լույս, կուսակցութիւնից զիր առ հկել,  
զոր Աստղիկը եթա երևան ուսումի:

ՄԱՐ.—Բա կասեր՝ փախցնում ենք:

ԲԱՐԾ.—Են զառափաթ ա կաներ, սանամեր:

ՄԻՍ., ԱՍՏ.—(Արամայիսին ինչ-վոր պատմում են, Արամայիսը վր-  
դոված նեաներ ե անում):

ԱՐԱՄ.—(Մոտենալով Մարիամին, կիսանանդիմանական) Մարիամ  
քուցրիկ, ես ի՞նչ եմ իմանում..., Պատվավոր դոնախների  
յեր սպասում, համ:

ՄԻՍ.—Վոչինչ, Արամայիս, զոր եղանս ե յնդել, մենք նրանց հա-  
խից կրանք:

ԱՐԱՄ.—Անպատճառ, ի՞նչպես են եղ սրիկաները պայմանա-  
վորվել:

ԲԱՐԾ.—Ասել են՝ ճրագը կդնես ակուշի գողը, դուռն ել բաց  
կթողնես (Դրսից լսում ե սուլոց, նետ յերկրորդ սուլոց):

ՄԻՍ.—Ես նրանք կլինեն, իրար ձեն են տալիս:

ԱՐԱՄ.—Հիմի ի՞նչ անհնք... (Մտածում ե, վնուական) Լավ: Յես  
ես ա լամպը կդնես ակուշի գողը. յես, Միսակը, քաղորը  
կեթանք թոնրատուն. դուք մեր ու աղջիկ ձեզ համար նըս-  
տեք արխելին, թող նրանք զան: Թե իրանց նամուսով հե-  
սացան, լավ. չե, մենք կվարվենք նրանց հետ ի՞նչպես  
պետք ե: (Լամպը ցած ե բերում, դեռում պատմանին) Դե,  
քավոր, առաջ անցիր, հայդա:

ՄԱՐ.—Աման, Արամայիսի ջան, քեզ մի բան չըլի:

ԱՐԱՄ.—(Դոնից) Արխելին մեա: Աստղիկ, քեզ տեսնեմ, դոքայ  
կաց (նեռանում են: Յերկար պառզա, յերթեն լսում ե տան  
կալանջը):

ՄԱՐ.—(Նսած ժեղը անհանգիս շարժումներ ե անում) Ախ, ասու-  
ված, աստված, դու վողորմիս մեղի:

ԱՍՏ.—Մայրիկ, հանգիստ եղիր:

ՄԱՐ.—Ի՞նչ թհար հանգիստ ըլեմ, Աստղիկ ջան... Վախենամ  
շատվոր ըլեն, մի կոփի քցեն, տանս մեջ արին ըլի...

ԱՍՏ.—Մի վախենա, մայրիկ, վոչինչ ել չի ըլի:

ՄԱՐ.—Ոփ, ելի սպանված ախարդ պատկերը եկալ աշքիս առաջ:

ԱՍՏ.—Մայրիկ ջան, եղ մտքերը հեռացըրու քեղանից:

ՄԱՐ.—Ախ, չի ըլում: (Պառզա) Ախ, մի եղուց սպայտալամաթ  
եթալիր երևան...

ԱՍՏ.—Եղանքս ել կըլի, մայրիկ, մի վախի: (Լովում ե օան կա-  
սաղի հաջոցը: Յերկուսն ել ցնցվում են) Ես ե եկան: (Հան-  
իարձ լսում ե դրաի դռան նոռոցը, վոր, բացվում ե զգութ,  
կամաց):

## ՏԵՍԻԼ 7:

Նույնի, Ա.Ե.Ք.Ս.Ա.Ն յեվ Կիր.Ա.Կ.Ո

(Ալեքսան, Կիրակոս ներս են մտնում կամաց գաղտապողի, նազնված  
են բուրկաներ (յափնջի), մորք մեծ զիխարկներով. զինված են խան-  
չալներով, մահակներով: Ալեքսանի ձեռին կա նայել պարան, յեվ  
մի մեծ բաւկինակ: Երանց տեսն առնասարակ ահարկու յե: Յերկար  
պառզա: Ալեքսան, Կիրակոս իրար հետ ինչ-վոր վախում են, վոր  
Մարիամը չի վարվել համաձայն պայմանի):

ԿԻՐ.—(Յերկարացնելով) Բարի իրիկուն ձեզի: (Պառզա) ՀԿԿԿ  
Աստղիկ, մերդ քեզ ասած կըլի...

ԱՍՏ.—(Սառը) Ասել ա:

ԿԻՐ.—Դե, վոր հիմի եղանքս քաղաքավարի նստել ես, մենք ել  
քեզի քաղաքավարի կիսուրենք: Վոր քաղաքավարի վեր կե-  
նաս ու եթանք:

ԱՍՏ.—Եղ վոր եղանքս քաղաքավարութիւն անունից եք խոսում,  
յես ել ձեզ քաղաքավարի կիսուրեմ, վոր ձեր կրնկի վրա  
շուր զաք ու զնաք ձեր բանին:

ԱԼԵՔ., ԿԻՐ.—(Զարմացած նայում են իրար յերեսի):

ԿԻՐ.—(Մարիամին) Մենք քեզ հետ եղանք ելինք պայման արել:

ՄԱՐ.—(Սուանց լսելու Կիրակոսին) Ալեքսան, աղաչանք կանեմ,  
լավ ա, ախանք, գնա ու քո բախտը մի ուրիշ տեղ փնտոի:  
Քյասար՝ աղջիկս քեզ չուզա:

ԱԼԵՔ.—Ի՞նչ թհար՝ չուզա... Բա յես նրա մասխարեն ըլեմ:

ՄԱՐ.—Ինչի՞ յես նրա մասխարեն ըլում, են քե ի՞նչ ա արել, յա  
չե ի՞նչ կարա անի:

ԱԼԵՔ.—Բա վոր կիսացս թասը գետնովը տվեց...

ՄԱՐ.—Եղ ել ջանելութիւնն եր, ներիր:

ԱԼԵՔ.—Բա մենք ել ինչի՞ համար ենք եկել ըստի:

ՄԱՐ.—Եկել եք, բարով եք եկել: Մենք ել հիմի աղաչանք կա-  
նենք, վոր պատվով, անուշութիւնը եթաք ձեր բանին, մեզ  
ել թողնեք մեր հալին:

ԿԻՐ.—(Խիս) Ես ի՞նչ... Մեր ու աղջիկ կուզեք մեզ մասխարա  
ցցէք...

ՄԱՐ.—Կիրակոս ջան, մենք ել ով ենք, վոր ձեզպեսներին մաս-  
խարա զցենք:

ԿԻՐ.—Բանն ել եղա, և, վոր ձեզպեսները կուղեն եղ հալով մեզ  
վրա ծիծաղան: (Մարտինին) Բա են շխչանի չերգոննեցները  
առնելու վախտը ժոր եր քո խելքը, ել մեզ ինչու կանչեցիր:

ՄԱՐ.—Հոգուդ ինչի՞ յես մեղք անում, կիրակոս: Յես ձեզ վոչ  
կանչել եմ, վոչ ել փող եմ վե կալե:

ԿԻՐ.—Ի՞նչ...

ԱԼԵՔ.—(Սպառնական) Այ շան կնիկ, փողերս ել կուղես ուրա-  
նալու:

ՄԱՐ.—Զեմ ուրանա, վող թողել եք. (մեկնելով փողերը) ըհը,  
ախպեր, ձեր փողերը. ինչ թհար թողել եք, ենպես ել կա:

ԱԼԵՔ.—(Մեթեայաբար վերցնում ի փողերը):

ԿԻՐ.—Կուղես, յետ տու, մեկ ա, ել ուշ ա: Ես մարզը 3—4 վոչ-  
խար ա մորթել, ենքան փող ծախսել, դոնախներն ել եկել  
են: Ինչ ել ըլի՝ աղջկանդ պտի տանենք:

ՄԱՐ.—(Ողերսագին) Ելի աղաչանք կանեմ, կիրակոս ջան, իմա-  
ցիր, թե քո քիրն ա, իմացիր, թե վարձք ա՝ կանես, եղ  
բանը մի արա: Կուղես վոտդ ընկնեմ, կիրակոս ջան, ես  
մեծ ու շեն ոջախից ես մի աղջիկն ա մնացել, նրա արհն  
ել միք սեացնի:

ԱԼԵՔ.—Լավ, համաձայն եմ: (Արամայիս, Միսուկ մոտենում են  
դունք, լուսի):

ՄԱՐ.—(Անչափ ուրախացած) Ապրիս, Ալեքսան, թող աստված...

ԱԼԵՔ.—Մենակ մի պայմանով: Թող ես գիշեր գա, մնա իմ կշտին,  
եգուց քո աղջիկը ելի թող քեզ ըլի (փողերից հաշվելով մի  
յերկու շերվանեց): Ըհը, ես չերգոննեցն ել վե կալ քեզ:

ՄԱՐ.—(Սարսափած) Վուց, Ալեքսան, եղ ի՞նչ ա ...

ԱՍՏ.—Անամոթ...

ԿԻՐ.—(Աստղիկին) Զենդ, լըրտված... եղ կուսակցականների կշտին  
քնիլս ամոթ չես անի... Դե հիմի քո վոտով ճամբա ըն-  
կիր, հայդա, թե չես...

ՄԱՐ.—(Աշխատում ի խնդրել կիրակոսին, վերջինս կոսիտ գրու-  
սում ի Մարտինին):

ԿԻՐ.—Դե, ռադ ելի:

ՄԻՍ., ԱՐԱՄ.—(Զգուց բալերով ներս են մտնում):

ԱՍՏ.—(Կիրակոսին) Զեռքերդ քեզ պահիր, չհամարձակվես մորու  
գիպչել:

ԱԼԵՔ.—Զենդ, լիրը աղջիկ:

ԿԻՐ.—(Ալեքսանին) Սրանց հետ քաղաքավարի խոսալը չարժե,  
անցիր բանիդ (հարձակվում է Մարտինի վրա):

ԱԼԵՔ.—(Հարձակվելով Աստղիկի վրա) Դե առաջանցիր, շան աղ-  
ջիկ, թե չե կոմսոմոլի լեզուդ...

ԱՐԱՄ.—(Դուրս ե զալիս մյուս սենյակից Միսակի հետ, ատրա-  
նակները ձեռներին) Կանգնեք...

ԱԼ., ԿԻՐ.—(Վախեցած յետ-յետ են գնում. խանչալներն ընկնում  
են ձեռներից):

ԱՐԱՄ.—(Առաջ գալով) Ամոթ չըլի հարցնելը, դուք դաշնակների  
կառավարութիւնն մեջ եք ապրում, թե Խորհրդային իշխա-  
նութիւնն Զեզ եմ հարցնում:

ԿԻՐ.—Խորհրդային իշխանության. ի՞նչ կա վոր, սադ ըլի ես կա-  
ռավարությունը:

ԱՐԱՄ.—Վոչինչ. մենակ մի բան, վոր իրավունք չի տալիս ձեր  
քիթն ու մոռությ տեղն ու տեղը ջարդել, ձեզ նման սրի-  
կաներին շանսատակ անել: Այդ մեկի համար, ճիշտ ե, դուք  
շատ եք սիրում Խորհրդային իշխանությունը:

ԱԼ., ԿԻՐ.—(Վախեցած լուսի են, դողում):

ԱՍՏ.—Բավական ե, ընկեր Արամալիս, թող հեռանան:

ԱՐԱՄ.—Ի՞նչ, ճեռանմն, վոր գնան ծաղրեն մեր իշխանությունն:

ԱՍՏ.—Ես անպատվությունն ել նրանց բավական ե:

ԱՐԱՄ.—Դաշնակցական որենքներին հավատարիմ մնացողների  
համար ի՞նչ նշանակություն ունի անպատվությունը:

ԿԻՐ.—Ե, ի՞նչ անենք, ասա, ախպեր, հալբաթ մի որ ել... (Հի  
վերջացնում):

ԱՐԱՄ.—Զեր դաշնակները կգան... Գիտեմ, նրանց շատ կարո-  
տած կըլիք, ամա գժվար թե նրանք ըստի գան. Ելի լավ  
կըլի դուք գնաք նրանց մոտ: Հիմի նրանք արտասահմանի  
քուչերում կապիկ են պար ածում, դուք ել նաղարեն խը-  
փեք: (Մտնում են յերկու զիշերապահները):

ԱՐԱՄ.—(Կիրակոսին, Ալեքսանին) Դե, հայդա, առաջ անցեք: (գի-  
շերապահներին) Կապահեք գրասենյակում մինչև իմ կարգա-  
դրությունը: (Ալեքսան, Կիրակոս նեռանում են):

ԲԱՐԵ.—Զարը խափանվեց, սանամեք:

ՄԱՐ.—Ոփ, ի՞նչ լավ, վոր եսպիս վերջացավ:

ՄԻՍ.—(Աստղիկին) Եղանակ, քեզ ուզում եյին ես գիշեր փախցնել,  
համ...

ԱՐԱՄ.—Ելի լենք փախցնելու, մենակ թե ուրիշ ուղղությամբ ե

ուրիշ նպատակով: Դե, Աստղիկ, պատրաստվիր, վազը ճա-  
նապարհվելու ինս Երեան:

ՄԱՐ.—Արամայիս ջան, մի բան՝ հարցնեմ, ես վոր հիմի աղջիկս  
եթա, Երևան մեծ քաղաք, ինքը խամ աղջիկ, վախենամ  
ընդի...

ՄՐԱՄ.—(Արելով խոսիր) եղ կողմից միամիտ եղիր: Նա կտպրի  
եր նման սովորող աղջկերանց հետ: Նրան կպահեն աչքի  
լուսի պես:

ԲԱՐՄ.—Մի բան ել յես հարցնեմ, Արամայիս ջան, նրա ուստե-  
լիքը, շորը, յա չե ուրիշ ծախսեր, ով ա տալու:

ԱՐԱՄ.—Ռւտելիք, շոր, կոշիկ, ամեն ինչ պետության հաշվին ա-  
րելու:

ԲԱՐՄ.—Ես ինչ լավ բան աւ...

ԱՐԱՄ.—Բա, քավոր Բարսեղ, վոր տուրք ենք հավաքում, խոսք  
եք անում, գանգատվում եք, հիմի տեսնեմ եք ձեր տված  
փողերը կառավարությունը ինչ նպատակների յի գործա-  
դրում:

ԲԱՐՄ.—Եիկոլի վախտն ել ելինք տուրք տալիս, ամա ով եր ի-  
մացել, վոր կառավարությունը գեղական աղջկան տանի  
քաղաք, ուսումի տա:

ՄԱՐ.—Աստված հաստատ պահի ես կառավությունը, ախ, լուս  
իջնի լենինի գերզմանին:

ԱՐԱՄ.—Լենինի գերեզմանի լուսը ես մեր ջահեների ուսումն ա-  
րլելու, ինչքան մեր ջահելը լուսավորվի, ենքան ել լենինի  
անունը պտի պայծառանա:

ՄԱՐ.—Արամայիս ջան, աղջիկս ինչքան ժամանակ ա սովորելու:

ԱՐԱՄ.—Յերկու տարի: Հետո կարող ե պատահել՝ ավելի բարձր  
ուսումի ուղարկեն:

ՄԱՐ.—Եղ խոմ աղջիկս կպառավի, են վախտ ըսկի ուզող չի ըլի:

ԱՐԱՄ.—Ի՞նչ ես վախենում, աղջկանդ ուզողը ուզել ա, հավա-  
նողն ել հավանել:

ՄԻՒ., ԱՍՏ.—(Խիստ կարմրում են անակնիալ հայտարարությունից,  
աշխերը զցում ցած):

ԱՐԱՄ.—Դուք ել ի՞նչ եք ոլինբազություններ անում... Ասեք ու  
պրծեք, ես խեղճ կնիկն ել միամտի:

ԱՍՏ., ՄԻՒ.—(Յերեսնեար ըուռ են տալիս):

ԲԱՐՄ.—Պա, եսպես բան կտա...

ԱՐԱՄ.—Բա չկա: Դե բոլ ա, կոմսոմոլին վայել չի ձեր արածը

(Բնիշաբար բանում ե մեկի լել մյուսի ականջներից, Մա-  
րիամին) ես ել քո փեսեն:

ՄԱՐ.—Ես ինչ եմ իմանում:

ԱՐԱՄ.—Ինչ վոր կա, են ես իմանում: Դե, շնորհավորեիր:

ԲԱՐՄ.—Շատ լավ բան ենք իմանում: Յես շնորհավորեցի, բախ-  
տավոր ըլեք:

ՄԱՐ.—Բա աղջկանս զրկում եք ուսումի:

ԱՐԱՄ.—Պոչինչ տղին ել կուղարկենք:

ԱՍՏ.—(Հուզված մոտենում ե, ընկնում մոր գիրկը) Մայրիկ...

ՄԱՐ.—Բախտավոր ըլես, աղջիկս, թող քո սրտով ըլի:

ԱՐԱՄ.—Յանի քո սրտով չի:

ՄԱՐ.—Արտովս ա, սրտովս, Արամայիս ջան: Իմ աղջիկս ում վոր  
սիրել ա, յես ել նրան կպաշտեմ (համբուրում ե Միսակին):

ՄԻՒ.—(Մարիամին) Յես միշտ փափագել եմ մայրիկ ունենալ:  
Դու գիտես, վոր չորս տարեկանից վորը եմ մնացել:

ՄԱՐ.—(Հիելով անցյալը) Ախ, մերդ՝ Նազիկը, աչքիս առաջին ա:

Միասին խաղացել ենք, միասին մեծացել Քո մերն ել մի

անբախտ կնիկ եր, քու գոռքագոս պապի ու իր կեսուրի  
ձեռքին մի յեսիր. որ ու արև չտեսավ, ջահել ջիվան հողը

մտավ: Ախ, են ի՞նչ որեր եր, ի՞նչ կարգեր:

ԱՐԱՄ.—Մարիամ քուրիկ, դե հիմի մենք ել ուզում ենք քան-

գել եղ կարգերը, փոխել հին որենքները:

ՄԱՐ.—(Հուզված) Քանդեցեք, բալա ջան, քանդեցեք, հիմի իմ  
սիրտս համաձայնվում ա:





40227

Գինը 40 կոպ. (Մ.) 3 $\frac{1}{2}$  մ.



---

Ա. Карагюян (Шар-Лат)

КОМСОМОЛКА АСТГИК

Госиздат ССР Армении  
Эревань, 1930 г.

---